



ՀՅԴ Պատգամաբերք




ԴՐՈՇԱԿ



«ԱՅԳ» ՄԱՏԵՆԱՇԱՐ-14

ԴՈՎՏ. ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ

ՏԵՐ ԶՕՐ
ՄԱՐՏԻՈՍԱՅ ՔԱՂԱՔ



Հոկտեմբեր N10 (1625)

2010

ՆՈՎԵՌ 2010



Խաղաղ Ստեփանակերտ



«Դրօշակ»

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Ռաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

խմբագիր՝ Կ. Խանլարյան

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեռավորումը՝ Ա. Գրիգորյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երևան, 375010, Միեր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaksoutiun publication

Editor-in-Chief: Rouben Hovsepien

12| 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

Ժողովրդավարության ՀՅԴ ընկալումը 2

Հարցազրույց

Իբխանափոխություն՝ երկրի եւ ժողովրդի համար 4

Առաջարկ

Համահայկական համարկման մասին 12

Պատմաբանական

Արարա. 1918թ. Վեռուռե ձեղնումը 14

Տարածաբան

Նոր սեղանաբեր Միացյալ Նահանգներում Վրաստանի հակա-
ռուսական լոբբիստական գործունեության մեջ 20

Տարածաբան

Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի
զարգացումը որդես տարածաբանային
ռազմաֆաղափական իր դերակատարության
բարձրացման կարևոր բաղադրիչ 24

Ճանաչում

Քաղաքակրթությունն ընդդեմ ցեղասպանության 30

Վարկած

Մի բացառիկ լուսանկարի հետքերով 34

Տեսակետ

Հարցազրույց Հասան Մելիմ Օզերթեմի հետ 35

Նվիրյալներ

Մի էջ Արցախյան Ազատամարտի 39

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ


Միջկուսակցային խորհրդաժողով

Նոր գրքեր

Տեր Զոր՝ Մարտիրոսաց ֆաղափ

Պատկերասրահ

Կարեն Կարադեյան 48



Ժողովրդավարության

ՀՅԴ ընկալումը

Ժողովրդավարությունը, ազգայնությունը եւ յեղափոխականությունը համամարդկային գաղափարական արժեքներ են, որոնց միջոցով Դաշնակցությունը ձգտում է ամբողջական Հայրենիքի վրայ ստեղծել հզոր պետություն եւ մէկտեղում հայութեան ազգային, քաղաքական, սոցիալական եւ հոգեմտաւոր կեանքը դարձնել համերաշխ, ազատ, արդար ու կենսունակ: Ազատ Հայաստանի եւ հայ մարդու ազատութեան նպատակին հասնելու բարդ ճանապարհը, ըստ Դաշնակցութեան, անցնում է ժողովրդավարութեան միջից:

Դաշնակցութեան նշումը գաղափարները միմեանցից անկախ, տարանջատ արժեքներ չեն: Այս արժեքների տեսաբանական բնաշրջումը եւ գաղափարախօսական շարժումների փորձը ցոյց է տալիս, որ ընկերվարությունը, ժողովրդավարությունը, ազգայնությունն ու յեղափոխականությունն իրար չհակասող, համադրուող գաղափարներ են, որոնք ի վիճակի են համարկուել որպէս արժեքային մէկ եւ անբաժանելի համակարգ:

Դաշնակցութեան համար ժողովրդավարությունը միմիայն քաղաքական համակարգի կառա-

վարման մեխանիզմ չէ, այն պէտք է տարածուի պետական կեանքի բոլոր ոլորտներում: «Ժողովրդավարությունը,- ասում է ՀՅԴ ծրագրում,- խարսխում է մարդկային եւ քաղաքացիական իրաւունքները եւ ազատութիւնները յարգելու վրայ: Այն օրէնքով պաշտպանում է բազմակարծութիւնը, բազմակուսակցականութիւնը եւ խօսքի, խղճի, մամուլի, ստեղծագործելու եւ աշխատանքի լիակատար ազատութիւնը»: ՀՅԴ ծրագիրը արժարժում է ե՛ր բազմակարծութեան եւ բազմակուսակցականութեան սկզբունքները, որոնք քաղաքական կատեգորիաներ են, ե՛ւ խղճի եւ ստեղծագործելու ազատութեան հարցը, որն, ըստ էութեան, մտային, հոգեմտաւոր հասկացութիւն է, ե՛ւ աշխատանքի լիակատար ազատութեան խնդիրը, որ ամբողջապէս սոցիալական բնոյթ է կրում:

Հայաստանում բազմակարծութիւնը, բազմակուսակցականութիւնը եւ խօսքի, մամուլի ազատութիւնները գոյութիւն ունեն, սակայն դրանք դեռ հեռու են ժողովրդավարական ազատութիւններ հասկացութիւնից: Այդ ազատութիւնները ժողովրդավարական համարուելու իրաւունքը կը վաստակեն այն ժամանակ, երբ գերծ մնան բիրտ ու-

ժի ազդեցութիւններից, եւ երբ կ'առաջնորդուն էրիկայի, խղճի եւ բարոյականութեան սահմանների պահպանման գիտակցութեամբ: Ոչ մի օրէնք եւ ոչ մի մեխանիզմ չի կարող ճշտել եւ հսկել նշուած սահմանները, եթէ դրանք չեն ձեւաւորուել մարդկանց ենթակայական ներաշխարհում: Ժողովրդավարական օրէնքները անվերջ խախտուելու, արդիւնքում՝ յաճախաբար դատ ու դատաստանների առարկայ դառնալու համար չեն մշակուում: Դրանք մշակուում են, հիմնականում, հաւաքական գիտակցութիւն ձեւաւորելու նպատակով:

Իսկ խղճի եւ ստեղծագործելու ազատութեան գաղափարը Հայաստանում լուրջ հարուածներ է ստացել եւ շարունակուում է ստանալ գիտութեան, մշակութային եւ արուեստի գրեթէ բոլոր բնագաւառներում «ազատ շուկայական» դրութեան կիրառմամբ եւ դրա համապատասխան հոգեվիճակի տարածմամբ: Գիտական եւ մշակութային ստեղծագործութեանը հնարաւոր չէ վերաբերուել խաղողի բերքատուութեան կամ հաստոցաշինական արտադրութեան օրէնքներով: Պետութեան հոգածութեամբ եւ աջակցութեամբ այս ոլորտը պէտք է ղեկավարուի ոչ թէ հասարակութեան անմիջական ցանկութիւնների հիման վրայ առաջացած պահանջարկով, այլ՝ սերունդների հոգեմըտաւոր առողջութեան եւ ազգային նկարագրի անվտանգութեան ապահովման սկզբունքներով: Այդպիսի ոլորտի առկայութեամբ միայն կարելի է խօսել ստեղծագործելու ժողովրդավարական ազատութեան վերաբերեալ:

Աշխատանքի լիակատար ազատութիւն հասկացութիւնը, ընդհանրապէս, գոյութիւն չունի եւ այդ կապակցութեամբ լուրջ բարեփոխումներ են հարկաւոր: Նորագատականները ժողովրդավարութիւնը բացառապէս քաղաքական կատեգորիա են ընկալում: Որովհետեւ ծայրայեղ ազատական տնտեսական գործող մոդելը իր էութեամբ արատաւոր է, ուր սպառողների, ծառայութիւնների բնագաւառում աշխատողների եւ հենց արտադրողների տեսակետները բոլորովին էլ հաշուի չեն առնում: Սոցիալ-տնտեսական ոլորտում ժողովրդավարութեան մեխանիզմների տարածման, ընդհանրացման անհրաժեշտութեամբ՝ ՀՅԴ ծրագիրը շեշտում է ընկերվարութեան ու ժողովրդավարութեան միջեւ կապուածութեան եւ փոխայայնանաւորուածութեան խորքային հասկացութիւնը. «ՀՅ Դ-աշնակցութիւնը հաւատում է,

որ ընկերվարութեան իդէալը անհրականանալի է առանց ժողովրդավարութեան, իսկ ժողովրդավարութիւնը թերի է եւ սահմանափակ՝ առանց ընկերվարութեան»: Այս ըմբռնումով՝ ներկայիս Հայաստանը հեռու է լիարժէք ժողովրդավարութիւնից:

ՀՅԴ ծրագիրը նաեւ բնորոշում է հաւասարութիւն եզրոյթի երկու հասկացութիւն. հնարաւորութիւնների հաւասարութիւն, որն ըստ էութեան սոցիալական կատեգորիա է եւ իրաւունքների հաւասարութիւն, որն իրաւական եւ քաղաքացիական բնոյթ է կրում: Քաղաքացիական իրաւունքների հիման վրայ, ՀՅԴ ծրագիրը առաջադրում է մի շարք համակարգային հիմնադրոյթներ, ժողովրդավարութեան արդիւնաւետութեան բարձրացման նպատակով: Այսպէս՝ ժողովրդավարութիւնը «ապահովում է ժողովրդի կամքի անկաշկանդ արտայայտութիւնը եւ, հաստատութենական ու ներկայացուցչական հիմունքով, ժողովուրդի ամբողջական եւ լիարժէք մասնակցութիւնը քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային կեանքին՝ այդպիսով արդիւնաւետ հիմքերի վրայ դնելով ժողովրդի եւ պետութեան փոխյարաբերութիւնները»:

Ժողովրդավարութեան ներկայացուցչական ձեւաչափին զուգահեռ առաջադրում է հաստատութենականութեան եւ «քաղաքացիական հասարակութեան» կարգավիճակի հաստատման սկզբունքը: Նորօրեայ ժողովրդավարական մտայնութեան մէջ «քաղաքացիական հասարակութիւն» ոլորտը, առանձնանալով տնտեսական եւ քաղաքական ոլորտներից, համարում է ժողովրդավարութեան արդիւնաւետութիւնը բարձրացնող մեխանիզմ եւ դրա խորացումը ապահովող երաշխիք:

Ժողովրդավարութիւնի՞ց է ծնում սոցիալապէս ապահով հասարակութիւն, թէ՞ սոցիալապէս ապահով հասարակութեան մէջ են ձեւաւորում ժողովրդավարական արժէքները: Վերջապէս՝ Հայաստանի դէպքում հնարաւոր է լուծել այս՝ «հաւ թէ՞ հաւկիթ»-ի հանելուկը: Մեր համոզմամբ կարելի է. պէտք է լիակատար ազատութեան հասնել արդարութեան սկզբունքի համատարած կիրառմամբ եւ պէտք է ձգտել սոցիալական արդարութեան՝ ժողովրդավարութեան ճանապարհով:



Իշխանափոխություն՝ երկրի եւ ժողովրդի համար

«Դրօշակի» հարցերին պատասխանում է
ՀՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը

- Ինչպե՞ս եք պատկերացնում ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական-իրավական պետության կայացմանը հետամուտ նոր իշխանության ձևավորման խնդիրը: ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի մշակած ծրագրի այս դրույթն ինչո՞վ է տարբերվում ՀԱԿ-ի հռչակած իշխանափոխության կարգախոսից:

- Խնդիրը, որի մասին հարցնում եք, նախևառաջ պետք է դիտարկել որպես մեր սահմանադրության պահանջ, որպես մեր հիմնական օրենքի երկու կարևորագույն հոդվածներից մեկը: Հետևաբար, դա ողջ հայ ժողովրդի խնդիրն է: Պետություն ստեղծելով, ժողովուրդը, բնական է, պետք է նաև հետամուտ լինի, որ իր պետությունը լինի ժողովրդավար, սոցիալական-իրավական: Լինի այնպիսի պետություն, որտեղ տարբերություն չդրվի քաղաքացիների միջև,

որտեղ ամեն մի քաղաքացի իր կողքին զգա սեփական պետության ներկայությունը՝ իր հոգսերի, իր իրավունքների, իր անվտանգության, իր ապագայի երաշխավորության առումով: Բնական է, որ սա էլ իր հերթին ենթադրում է պետության խնդիրների ու ապագայի նկատմամբ այդ պետության քաղաքացու պատասխանատվություն: Մեզանում այդ համամասնությունն է խզված և առաջին հերթին անհրաժեշտ է վերականգնել այդ խզումը: Ստացվել է այնպես, որ մենք դե յուրե ունենք սահմանադրական մի կարգ, բայց դե ֆակտո՝ այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք, մեղմ ասած, չեն համապատասխանում մեր իսկ սահմանադրության նորմերին ու դրույթներին, կապ չունեն թե քաղաքացու և թե պետության՝ սահմանադրությանը անբաժանելի իրավունքների ու պարտականությունների հետ:

Ո՞րն է մեր խնդիրը: Մենք ու-

զում ենք, որ ժողովուրդը խորապես գիտակցի, թե ինչո՞վ պետք է հենց ինքը իշխանություն ձևավորի, ո՞րն է այդ գործընթացում իր հիմնական առաքելությունը: Այս հարցն իրականում շատ պարզ պատասխան ունի՝ ով փաստացի ձևավորում՝ նրան էլ ի վերջո ծառայում է իշխանությունը: Հետևաբար, ժողովրդի հիմնական առաքելությունն է՝ այնպես անել, որ սեփական իշխանությանը կարողանա իրականացնել սահմանադրությանը անբաժանելի իր նպատակներն ու խնդիրները, որ պետությունն այլ առաքելություն չունենա, քան իր քաղաքացու բարօրության ու անվտանգության ապահովումը:

- Բայց այդ ամենի համար, նախևառաջ, ժողովուրդը պետք է իշխանություն ընտրի: Մենք անընդհատ ընտրում ենք, բայց պետությունը, որ պետք է մեր կողքին

հայտնվի, չի հայտնվում:

- Դա արդեն հարցի մյուս երեսն է: Շատ կարևոր է, թե ինչպես է իշխանություն ձևավորվում: Մենք, ցավոք, հենց այս փուլում ունենք շատ մեծ խզումներ: Ընտրությունները, որ իշխանություն ձևավորելու ժողովրդավարական գլխավոր միջոցն է, մեզանում, որպես այդպիսին, իրականում տեղի չեն ունենում, և ամեն անգամ այս կամ այն չափով կեղծվում են դրանց արդյունքները: Ավելին, կարող եմ ասել, որ ժողովուրդն արդեն չի հավատում ընտրություններին ընդհանրապես: Չհավատալով դրա նշանակությանը՝ ժողովուրդն արդեն չի էլ տեսնում իր դերն այդ ընտրություններում: Հետևաբար, կարող ենք ասել, որ մեր սահմանադրության երկրորդ հիմնարար հոդվածը, որով մեր երկրում իշխանությունը պատկանում է ժողովրդին, նույնպես խախտված է և այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Արդյունքում՝ խոսել երկրում ներկայացուցչական, մասնակցային և անմիջական ժողովրդավարության առկայության մասին, միանգամայն ավելորդ է դառնում:

- Ժողովրդավարությունն ասվածի այդ տարբեր դրսևորումները հասարակության որոշ խավերի համար կարող են և անհասկանալի լինել: Կրթացե՞ք փակագծերը:

- Ներկայացուցչական ժողովրդավարությունն այն է, երբ ժողովուրդն ընտրում է իր ներկայացուցիչներին և նրանց միջոցով երկրում իրա-

կանացնում իր իշխանությունը: Դժբախտաբար, մեզ մոտ այսօր այդպես չէ և հենց առաջին այս փուլում էլ սկիզբ է առնում ժողովուրդ-իշխանություն օտարումը: Հաջորդը՝ մասնակցային ժողովրդավարությունը, մեզանում գրեթե գոյություն չունի: Ժողովուրդը, ներկայացուցիչներ ընտրելուց հետո չպետք է նստի տանը և հույսը դնի ներկայացուցիչների ու պետության կառավարման հարցում նրանց կայացրած որոշումների վրա: Ժողովուրդը պետք է միջոց, լծակ ունենա նաև որոշումների կայացման, այս գործընթացի վրա ազդելու: Խոսքը վերաբերում է ընտրությունից-ընտրություն ժամանակահատվածին, որի ընթացքում հասարակությունը պետք է կարողանա իր նպաստը բերել թե կարևորագույն հարցերի լուծմանը և թե, հարկ եղած դեպքում, զսպել շեղվող իշխանություններին: Ժողովրդավարությունն այս դեպքում իրականացվում է զանազան հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և հատկապես ընդդիմության հակակշռող գործունեության ամրագրման միջոցով: Բայց, ինչպես արդեն ասացի, մասնակցային ժողովրդավարության այս դաշտը ևս կայացած չէ:

Իսկ ինչ վերաբերում է անմիջական ժողովրդավարությանը, ապա այն պետք է դրսևորվի առաջին հերթին հանրաքվեների և տեղական ինքնակառավարման միջոցով: Կարող եմ ասել, որ մեր մի շարք համայնքներում ժողովրդին հաջողվել է իրականացնել համայնքի իր ուզած ներկայացուցչի՝ համայնքապետի ընտրությունը: Դա, իհարկե, առաջին

հերթին բացատրվում է համայնքի համեմատաբար փոքր չափերով, համայնքապետի հետ համայնքի անդամների ամենօրյա և անմիջական շփումների փաստով: Առավել մեծ քաղաքներում իրավիճակը դարձյալ բարվոք չէ և դարձյալ ստիպված ենք արձանագրել, որ մեզանում անմիջական ժողովրդավարության մակարդակը նույնպես անհրաժեշտ մակարդակի վրա չէ:

Ամփոփելով՝ կարող եմ ասել, որ ժողովրդավարության կայացման բոլոր երեք բաղադրիչներով էլ լուրջ խընդիրներ ունենք: Եվ մենք, երբ դնում ենք նոր իշխանություն ձևավորելու խնդիրը, առաջին հերթին նկատի ունենք այնպիսի մի իշխանություն, որ վերը նկարագրված՝ ամբողջական ժողովրդավարության ամրապնդման խնդիրների լուծումն իր հիմնական առաքելությունը կհամարի:

- Այդ նոր իշխանությունն ունի՞ արդյոք նմանություններ վերանկախացումից հետո մեր ընտրած իշխանությունների հետ: Ի՞նչը պետք է կողմնորոշիչ լինի հայաստանցի ընտրողի համար, որպեսզի արդյունքում նա ավելի լավ իշխանություն ձևավորի:

- Այսպիսի իշխանություն, ինչի մասին մենք խոսում ենք, վերանկախացումից ի վեր Հայաստանում երբեք չի եղել: Այն անվստահությունը պետական մեխանիզմների նրկատմամբ, որ այսօր կա մեր հասարակության մեջ, ոչ թե մեկ-երկու տարվա, այլ վեր-

ջին 20 տարիների արդյունք է: Մեր բոլոր իշխանություններն էլ, քանի որ, յուրաքանչյուրն իր հերթին, չեն ձևավորվել ցանկալի ժողովրդավարությամբ, իրենց գոյության տարիներին ոչ թե ծառայել են ժողովրդին, ոչ թե կայացրել են ժողովրդավարությունն ու ժողովրդավարության մեխանիզմները, այլ ամրապնդել են այն մեխանիզմները, որոնք առաջին հերթին ծառայում են իրենց վերարտադրությանը: Իսկ իշխանությունների վերարտադրությունը կարող է ապահովվել բացառապես ընտրական արատավոր հարաբերությունների հաստատման միջոցով, ինչը պարարտ հող է ձևավորում լծակների անսանձ չարաշահման, համատարած ընտրակաշառքների և ընտրակեղծիքների կիրառման համար:

Խնդիրը, որ մենք դրել ենք մեր առջև՝ ձևավորել բոլորովին նոր իշխանություն, ենթադրում է գլոբալ, խորքային լուրջ փոփոխություններ իշխանական համակարգում և իշխանություն ասվածի նրկատմամբ հասարակության մեջ եղած պատկերացումներում: Ոչ ոք չի գա դրսից և մեզ ժողովրդավար իշխանություն չի նվիրի: Դա, մեր ժողովրդի անելիքն է՝ իր անմիջական մասնակցությամբ ձևավորել սեփական երկրի ժողովրդավար իշխանություն: Ամեն մի ժողովուրդ ինքն է նվաճում իր պատկերացումներին համապատասխանող երկրում ապրելու իրավունքը: Մենք նաև ցանկանում ենք, որ ձևավորվելիք նոր իշխանությունը ըն-

կալի, թե հատկապես ո՞րն է իր առաքելությունը: Այդ նոր իշխանության կարևորագույն խնդիրն այնպիսի համակարգի հիմնումն է, որն արդարություն կապահովի բոլորի համար՝ ոչ միայն իշխանության, այլև ժողովրդի տարբեր խավերի համար: Այսօր, ցավոք, երբ ասում են հաստատել արդարություն, հաճախ պատկերացում են, թե բավական է, որ իրենց հանդեպ անարդարություն չլինի: Բայց սա շատ սխալ ընկալում է: Որովհետև, եթե դու անարդարությունից պաշտպանված ես, դա դեռ չի նշանակում, որ մյուսներն էլ են այդ վիճակում, ավելին, դա դեռ երաշխիք չէ այն բանի, որ դու վաղն էլ ես պաշտպանված լինելու անարդարությունից: Այդ իսկ պատճառով՝ անարդար չըպետք է լինի ոչ մեկի համար, որպեսզի արդարություն հաստատվի: Արդարությունը հավասարություն է սիրում և չի հանդուրժում երկակի ստանդարտներ: Դժբախտաբար, մեր քաղաքական ուժերի զգալի մասը մինչ օրս, արդարություն ուզելով, գիտակցաբար, թե ենթագիտակցաբար, իշխանություն ունենալը համարել է անարդարությունից պաշտպանվելու միակ միջոցը: Այդպիսի պատկերացումներն են, որ իշխանության պահպանումը կամ իշխանափոխությունը դարձնում են կյանքի ու մահու կռիվ, այլ ոչ ամենևին արդարության հաստատման միջոց:

Այս ամենի գիտակցումը բխում է մեր կուսակցության վերջին քսան տարիների փորձից: Այդ տարիներին մենք եղել ենք և ընդդիմություն, և իշխանության մաս, հետևաբար, և այս, և այն դիրքերից առավել ամբողջական ենք պատկերացում թվարկված

խնդիրներն ու տեսնում դրանց լուծումը:

- **ՀՅ Գաշնակցությունը Հայաստանում վերահաստատվելու օրվանից միշտ էլ հանդես է եկել այն կոչով, որ իշխանություններ ձևավորելու գործընթացները չպիտի ուղեկցվեն հասարակության տարբեր խմբերի մեջ թշնամանք և ատելություն սերմանելով: Այսօր ՀՅԳ-ն իշխանափոխության խնդիր է դնում և դարձյալ շեշտում, որ իր ծրագրի մարտավարության մեջ թշնամանքն ու ատելությունը տեղ պիտի չունենան: Բայց, ուզենք, թե չուզենք, թշնամանքն ու ատելությունն արդեն գոյություն ունեն հասարակության մեջ: Նյութական բարիքների անարդար բաշխումը, գործազրկությունը, կաշառակերությունը, իշխանական կուսակցությունների «խաղաղ» ներթափանցումը երկրի կառավարման բոլոր օղակներ՝ դուրս մղելով այլ կուսակցությունների կարող ուժերին. այս ամենը, ցանկանանք, թե ոչ, սնում են թե թշնամանք և թե ատելություն: ՀՅԳ Հայաստանի կազմակերպությունն ինչպե՞ս է պայքարելու այս երևույթների դեմ:**

- Նախ՝ երբ իշխանափոխությունը իսկապես ժողովրդի համար է, այլ ոչ թե մի ինչ-որ խմբի, չի կարող իրականացվել ժողովրդին պառակտելու ճանապարհով: Իսկ թշնամանքն ու ատելությունը բերում են հասարակությանը օտարների և յուրայինների բաժանելուն: Այսպիսի իշխանափոխության միջոցով ձևա-

վորված իշխանությունը գործելու է իր նախկինների տրամաբանությամբ՝ հալածանքներ սկսելով իր հակառակորդների նկատմամբ, և հետզհետե ինքն էլ է սկսելու օտարվել հասարակությունից: Այսինքն, իրեն պաշտպանված զգալով անարդարությունից, իր իսկ կուտակած թշնամանքի ու ատելության պատճառով մղվելու է անարդարության: Թշնամանքի և ատելության վրա կառուցված իշխանափոխությունը, վերածվելով զուտ ընդդեմի պայքարի, լուծում է հարցի միայն մի մասը՝ ազատվել գործող իշխանությունից: Այն չի ապահովում իշխանությունների նոր որակ: Մեր օրերում դա կարտահայտվի նրանով, որ այդպիսի իշխանափոխության արդյունքում ընդամենը տեղի կունենա սեփականության վերաբաշխում հին և նոր օլիգարխների միջև և իշխանության փոխանցում հին ու նոր վարչախմբերի միջև: Բովանդակային և որակական փոփոխություններ չբերող ցանկացած իշխանափոխություն պարզունակ մարդափոխություն է: Այդպիսի իշխանափոխության արդյունքում, ինչպես հայտնի հեքիաթում, հրեշի սպանողն ինքն է դառնում հրեշ՝ տիրանալով նրա կարողություններին:

Հետևաբար, թշնամանքի և ատելության վրա գործելը մեզ կարող է շատ վտանգավոր տեղ տանել: «Մարտի 1»-երը կարող են շարունակական բնույթ ստանալ, արատավոր համակարգը շարունակաբար

կփոխարինվի դարձյալ արատավոր համակարգով, և մարդիկ, դա այսօր էլ նկատվում է, այլ ելք չգտնելով, կսկսեն զանգվածաբար լքել Հայաստանը՝ օտար երկրներում վայելելու մյուս ժողովուրդների ստեղծած, ամրագրած ժողովրդավարության պտուղները:

- Դուք ասում եք, որ որակական տեղաշարժ պետք է տեղի ունենա մարդկանց՝ հավասարապես, ժողովրդի ու նրա այսօրվա իշխանությունների մտածողության մեջ, երկուստեք պետք է հասկանան, որ այսպես այլևս շարունակվել չի կարող: Ի՞նչ եք կարծում, մեր այսօրվա իշխանությունների մեջ, ավելի մասնավորեցնեն, մեր իշխանությունների այսօրվա առանցքային դեմքերի, նաև նրանց մեջ, ովքեր հայտարարում են այսօրվա դեմքերին փոխելու անհրաժեշտության մասին, ցանկություն կառաջանա՞ վերափոխվելու, ավելի ճիշտ՝ ենթարկվելու վերափոխման անհրաժեշտությանը:

- Այս դաշտում մենք ունենք լուրջ հակառակորդներ, ընդ որում՝ թե իշխանության և թե, այսպես կոչված, տիտղոսային ընդդիմության ճամբարներում: Եվ դա բնական է: Որովհետև այն, ինչ մենք ասում ենք, մի պարզ բան է նշանակում. թե նախկինները և թե ներկաները, ովքեր հիմնադրել ու ամրապնդել են այս արատավոր համակարգը, եթե չհրաժարվեն կառավարման իրենց արատավոր մեթոդներից, վերջին հաշվով, անելիք չեն ունենալու նոր համակարգի պայմաններում: Նրանք, իհարկե, բացահայտորեն չեն ընդդիմանում մեր տեսակետներին: Ավելին, սկսել են օգտվել նույնիսկ մեր բառա-

պաշարից: Մանավանդ այսօրվա իշխանությունների առանձին ներկայացուցիչներ այնպիսի ելույթներ են ունենում, որ առավել հեղափոխականություն ու արմատականություն դժվար է պատկերացնելը: Բայց մի բան է բարեփոխումների մասին հայտարարություններ անելը, իսկ բոլորովին այլ բան՝ այդ բարեփոխումներն իրականացնելու ցանկությունը: Ու երբ նայում ենք կատարված քայլերին, տեսնում ենք, որ դրանք բոլորովին չեն համապատասխանում հռչակված նպատակներին:

Մեզ չեն կարող ընդունել նաև մյուս բևեռից, նրանք, ովքեր զուտ մարդափոխությամբ են պատկերացնում իշխանափոխությունը: Մեր նպատակն այն չէ, որ ժողովրդին դարձյալ ստիպենք հավատալ խոստումների: Ժողովուրդը կգիտակցի, որ նման խոստումներ են տալիս նրանք, ովքեր, ժամանակին ունենալով լիարժեք իշխանություն, անհրաժեշտ արմատական փոփոխություններ չեն իրականացրել: Ի տարբերություն մեզ, որ ընդամենը իշխանության մաս ենք կազմել 98-2009 թվականներին, մյուսներն իրենց ժամանակներում եղել են լիարժեք իշխանություն: Հարց է առաջանում՝ ո՞ր է այն ժողովրդավարությունը, ո՞ր է այն բարեփոխումները, որոնց մասին անընդհատ խոսել ու խոսում են մեր նախկին ու ներկա իշխանությունները: Թող մեզ, նախկինները բացատրեն, թե, օրինակ, ինչո՞ւ ժամանակին

չդրվեցին ժողովրդավարության հիմքերը, այլ ընդհակառակը, խարխլվեցին, թույլ տրվեցին համակարգի ձևավորման լուրջ շեղումներ: Գործող իշխանությունը թող մեզ բացատրի, ինչո՞ւ են ընդդիմանում այն առաջարկներին ու քայլերին, որոնք ուղղված են ժողովրդավարական մեխանիզմների վերականգնելուն և ամրագրելուն: Կարծում եմ՝ պատասխանը երկու դեպքում էլ նույնն է, երկուսն էլ նույն նպատակն ունեն՝ ունենալ սեփական իշխանություն և ապահովել այդ իշխանության վերարտադրությունը:

Ես հիմա կդժվարանամ ասել՝ մինչև ընտրություններ ինչպիսի՞ որակական տեղաշարժեր կլինեն նշածս բևեռներում, կհայտնվե՞ն, արդյոք, նրանց շարքերում նոր մտածողությամբ, արմատական բարեփոխումների կողմնակից ուժեր, որոնք կկարողանան նժարը թեթև դեպի իսկական ժողովրդավարություն: Սա շատ էական է: Եթե դա տեղի ունենա՝ կնըշանակի, որ կարող է երկուստեք պայքար ընթանալ բոլորովին նոր երկիր, նոր իշխանություն, նոր հասարակություն ունենալու համար:

- Ակնհայտ է, որ մասնավորապես հասարակության մեջ արմատական որևէ փոփոխության դժվար է հասնել, առանց համախոհ լայն շրջանակների օժանդակության: ՀՅԳ-ն հնարավոր համարո՞ւմ է նման շրջանակի ձևավորումը:

Մեր հռչակած իշխանափո-

խության ծրագիրը, մերժելով թշնամանքն ու ատելությունը, առանձնապես սվիններով չի ընդունվում իշխանությունների և ՀԱԿ-ի կողմից: Սա դեռ չի նշանակում, որ նրանք, ինչպես և հրապարակի մյուս ուժերը, կարող է ոգևորությամբ ընդունեն այն: Բայց մի բան պարզ է, որ մեր ծրագրում կան դրույթներ, որոնք, եթե չասենք արժանի են ուշադրության, ապա գոնե խորհելու տեղիք են տալիս մեր «հակառակորդներին» և չկողմնորոշված ուժերին: Սա իր հերթին նշանակում է, որ հասարակությունն էլ, ի վերջո, աչքի առաջ ունենալով տառապանքի դառը փորձը, կընկալի, որ իրեն հենց այն իշխանափոխությունն է պետք, որի արդյունքում ինքը կկարողանա տեղ կանգնել ժողովրդավարություն ասվածի բարիքներին: Շրջանակը, որի մասին դուք ակնարկեցիք, ձևավորվելու է բոլորի ուժերով, ձևավորվելու է համախոհ հասարակության ուժերով, մանավանդ այդ հասարակության գիտակից հատվածի ուժերով: Այս դեպքում միայն մենք կկարողանանք հենու մնալ ատելության ու թշնամանքի հետագա խորացումից, վերջապես կձերբազատվենք վատի և վատթարագույնի միջև ընտրություն կատարելու այս մղձավանջից: Ելքը մենք ցույց ենք տալիս՝ չպառակտելով հասարակությանը, միավորելով նրան, անկախ այն հանգամանքից, թե նրա բեկորները որ ճամբարում են այսօր, գնալ հիրավի ազատ ու թափանցիկ ընտրությունների, որոնց արդյունքում կձևավորվի այն իշխանությունը, որ ընդունակ կլինի կյանքի կոչել վերևում նշված բոլոր բարեփո-

խումները: Որը նաև կարողանա լուծում տալ մեր համագալին խնդիրներին, որը կարողանա առավել էֆեկտիվ ճանապարհներով հասնել մեր համագալին նպատակներին: Դրանք այս կամ այն խավի խնդիրներն ու նպատակները չեն, դրանք միայն Դաշնակցության կուսակցական խնդիրներն ու նպատակները չեն: Դրանք բոլորինն են, և դա է հատկապես հույսներշնչում, որ մեր հռչակած ուղենիշների շուրջ մտքերի այնպիսի խմորում կառաջանա, որ իրոք կհամախմբի հասարակությանը:

- Որ առաջիկա ընտրություններում ԼՂՀ հարցի կարգավորման խնդիրը առանցքային է լինելու քաղաքական ուժերի քարոզչության մեջ, երկու կարծիք կարծես թե չկա: Հիմնականում ծանոթ լինելով ԼՂՀ հարցում ՀՅԳ-ի դիրքորոշումներին, հասարակությունը լսեց Դաշնակցության՝ այդ ուղղությամբ գործնական նոր քայլ անելու առաջարկի մասին, որ լայն հնչեղություն ստացավ: Խոսքը, որպես ԼՂՀ անկախության ճանաչման հանգրվան, Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ միջև ռազմաքաղաքական դաշինք կնքելու մասին է: Իրավակա՞ն է նման դաշինքի կնքումը, քանի դեռ ԼՂՀ-ն դե յուրե անկախ երկիր չի ճանաչվել:

- Բարձրացնելով ՀՀ-ԼՂՀ ռազմաքաղաքական դաշինքի մասին հարցը՝ մենք ցանկանում ենք լուծել մի քանի խնդիր: Մենք տեսնում ենք, որ այսօր հրապարակի վրա եր-

կու կարևորագույն խնդիր կա ԼՂՀ-ի հետ կապված, որոնք դեռ լուծված չեն: Առաջինը ԼՂՀ անկախության գործընթացն անշրջելի դարձնելն է, մյուսը՝ Հայաստանի Հանրապետության համար ԼՂՀ անկախության և անվտանգության երաշխավորի կարգավիճակի ամրագրումն է: Մենք, որպես այս կարևորագույն խնդիրների լուծմանը հասնելու հանգրվան, առաջարկում ենք ռազմավարական դաշինք կնքել ԼՂՀ հետ, որովհետև ԼՂՀ անկախության ճանաչման գործընթացում պակաս կարևոր չէ այն ամրագրումը, որ Հայաստանը, ԼՂՀ-ին պարտադրված ցանկացած ռազմական գործողությունների դեպքում, կապահովի նրա անվտանգությունը: Այս կապակցությամբ մեզ ասում են՝ ճանաչենք, հետո դաշինք կնքենք: Մենք ԼՂՀ անկախությունը ճանաչելու մեջ որևէ խնդիր չենք տեսնում և միշտ էլ պատրաստ ենք դա անել, եթե դա տեղի ունենա՝ պայմանավորված, առաջին հերթին, ՀՀ և ԼՂՀ միջև և մեր բոլոր քաղաքական ուժերի համախոհությամբ: Եվ այնուամենայնիվ հարց է առաջանալու՝ ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունը մինչ հիմա չի ճանաչել ԼՂՀ անկախությունը, մանավանդ, որ առնվազն երկու անգամ կարող էր դա անել: Ուրեմն 1991-ին, երբ Ղարաբաղը դիմեց ողջ աշխարհին, այդ թվում և Հայաստանին՝ ճանաչելու իր անկախությունը, և ապա՝ 1994-ին, երբ զինադադար էր հաստատվում: Մրանք

հրաշալի հնարավորություններ էին, որ մենք բաց ենք թողել ժամանակին: 1991 թվականին մենք կարող էինք հայտարարել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանական ԽՍՀ տարածքում ստեղծվել է երկու նոր պետություն, և մենք ճանաչում ենք թե մեկի և թե մյուսի անկախությունը: 1994 թվականի զինադադարը, բոլորն այդ գիտեն, առաջին հերթին պետք էր Ադրբեջանին, ով խուճապահար նահանջում էր իր իսկ սանձազերծած պատերազմում: Եվ եթե մենք ոչ թե կապիտուլյացիայի, այլ զինադադարի պայմանագիր էինք կնքում, ապա ճիշտ կլիներ հենց այդ պահին ճանաչել ԼՂՀ-ն որպես անկախ հանրապետություն, որպես արդյունք այդ պատերազմից հետո ստեղծված իրավիճակի: Նշածս իրադարձություններից հետո, հիմա, երբ էլ միակողմանի ճանաչենք ԼՂՀ անկախությունը, ուշացած քայլ է լինելու: Բայց քանի որ արդեն ուշացման մեջ ենք, ավելի լավ է դա անել մեզ համար առավել շահեկան պայմաններում: Այսօր, քանի դեռ ԼՂՀ հարցի կարգավորման շուրջ բանակցություններ են ընթանում, այս քայլը կարող է մեզ համար ոչ ձեռնառու կերպով ազդել բանակցություններում մեր դիրքերի վրա: Ադրբեջանն անընդհատ ձգտում է հարցը տեղափոխել այլ ատյաններ, բանակցությունները ձախողել, վարկաբեկել բանակցային գործընթացը՝ փորձելով մեղքը բարդել հայկական կողմի վրա: Մեր առաջարկը՝ ռազմավարական դաշինք կնքել ԼՂՀ հետ, տալիս է բոլոր հարցերի պատասխանը եւ, ըստ էության, մի միջանկյալ լուծում է: Այդպիսի

դաշինքի կնքումը ԼՂՀ անկախության ճանաչման դե յուրե ակտ չէ, ինչպես դա ընդունված է միջազգային պրակտիկայում և չի կարող ուղղակիորեն խոչընդոտ համարվել բանակցային գործընթացի համար: Բայց դաշինքի կնքումով իրականում շատ լուրջ քայլ կկատարենք դեպի այդ ճանաչումը: ԼՂՀ հետ ռազմավարական դաշինքի կնքումը որևէ կերպ չի կարող խոչընդոտել բանակցային գործընթացին, քանի որ ըստ էության դա հակաքայլ է այդ բանակցություններում Ադրբեջանի ապակառուցողական պահվածքին, որը բոլորովին էլ բանակցող կողմի պահվածք չէ: Մենք շփման գծում և Հայաստանի սահմաններին շարունակ գոհեր ենք տալիս, այնտեղ անընդհատ լարվածություն է տիրում: 1994-ից այսկողմ մենք մի պատերազմի չափ էլ անմեղ գոհ ենք տվել: Մա, արդյոք, բանակցող կողմի պահվածք է: Բայց Ադրբեջանը նաև դուրս չի գալիս բանակցություններից՝ ավելորդ հարվածների տակ չհայտնվելու մտավախությամբ: Այսինքն՝ ԼՂՀ լիարժեք անվտանգության խնդիրը վաղուց հասունացած է: Ուստի Հայաստանի Հանրապետությունն ամենայն լրջությամբ կարող է հայտարարել որ ինքը հանդիսանում է ԼՂՀ անվտանգության և անկախության երաշխավորը, մի բան, որ պակաս կարևոր չէ, քան ԼՂՀ անկախության ճանաչումը, քանզի միայն ճանաչումով մյուս հարցերը դեռևս չեն լուծվում: Մրա մասին է խոս-

քը: Այս դաշինքով, որտեղ պետք է ասված լինի, որ Հայաստանը հանդիսանում է ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման երաշխավորը, փաստորեն, մենք միանգամից երկու հարց ենք լուծում: Նախ՝ միջազգային չափանիշներով ԼՂՀ անվտանգության երաշխավոր լինելու հարցն է բերվում օրակարգ և ապա ամրագրում ենք ԼՂՀ հետագա կարգավիճակը՝ ձևավորելով ՀՀ-ԼՂՀ տանդեմ: Իսկ սրանք լուրջ հաստատումներ են, որոնք բխում են մեր ընդհանուր հայեցակարգի դրույթներից:

Այժմ այդ դաշինքի իրավական հիմքի մասին: Մեզ հարցնում են՝ ինչպե՞ս դաշինք կընքել ԼՂՀ հետ, եթե ԼՂՀ-ն դեռևս ճանաչված հանրապետություն չէ: Այդ դեպքում բացատրեք, խնդրեմ, թե 1994-ին ինչպես էինք զինադադարի պայմանագիր կնքում Ադրբեյջանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ: Մենք այսօր ԼՂՀ հետ ունենք բազմաթիվ միջգերատեսչական պայմանագրեր, մեր վարչապետներն են համաձայնագրեր կնքել, ԼՂՀ-ն դեսպանություն ունի Հայաստանում, իրար հետ հարաբերվում են մեր միջխորհրդարանական և միջգերատեսչական հանձնաժողովները, Հայաստանը ամենամյա միջպետական վարկ է տրամադրում Ղարաբաղին և այլն: Ի՞նչ է այս ամենը: Ասենք, որ սրանք իրավական տեսանկյունից սխալ են: Ոչ, այս ամենով, փաստորեն, մենք միանշանակ ընդունել ենք, ԼՂՀ գոյու-

թյան փաստը: Ռազմավարական դաշինքն էլ այս ամենի ամրագրումն է և լեգիտիմացումը: Պատկերավոր ասած՝ ուղտը նստելուց կուզեկուզ ման չեն գալիս:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ նշել մի նախաձեռնության մասին, որ հանդես է բերել ՀՀ կառավարությունը: Աժ է ներկայացվել միջազգային պայմանագրերի մասին օրենքում փոփոխություն նախատեսող մի օրինագիծ, որտեղ հստակ ասված է, որ ՀՀ կողմից կնքվող միջազգային պայմանագրերում որպես կողմ կարող են լինել նաև միջազգային սուբյեկտ չհամարվող կամ այդպիսին չճանաչված կազմավորումները: Այս փոփոխությամբ լրացուցիչ իրավական հիմքեր կձևավորվեն այսպիսի դաշինք կնքելու համար:

- Մեր լրատվամիջոցներում անընդհատ հրապարակումներ են հայտնվում այն մասին, որ կարծես միտում կա վերաբարմացնելու հայ-թուրքական հարաբերությունների սառեցված գործընթացը: Գուր վտանգ տեսնո՞ւմ եք դեռևս, որ հայ-թուրքական արձանագրությունները, ներկա տեսքով՝ ՄԳ-ի իրավական որոշմանը հակասող տրամաբանությամբ, հանկարծ վավերացվեն մեր Ազգային ժողովի կողմից: Ինչպե՞ս է վարվելու ՀՅԳ-ն նման զարգացումների դեպքում:

- Արձանագրությունների հետ կապված մեր մոտեցումներում փոփոխություն չկա: Հատկապես ՄԳ որոշումից հետո առավել հստակ դարձավ, որ մեր մոտեցումները նաև իրավական տեսանկյունից էին հիմնավորված: Այսքանից հետո, եթե Աժ-ն գնա այդ արձանագրությունները ներ-

կա տեսքով, առանց վերապահումների վավերացնելու քայլին, դա մենք կդիտենք որպես մեր Սահմանադրության խախտում, որպես ՄԳ-ի որոշման անտեսում: Ճիշտն ասած՝ իշխանությունների կողմից այդպիսի քայլ անելու ցանկություն, կարծես, չկա էլ: Բայց նրանք շարունակ հայտնվում են խոցելի, եթե չասենք անհեթեթ, վիճակի մեջ, երբ հայտարարում են, որ իրենք են կասեցրել գործընթացը և կվավերացնեն արձանագրությունները, եթե առաջինը Թուրքիան վավերացնի դրրանք: Փաստորեն ստացվում է, որ ոչ թե մենք, այլ Թուրքիան է հայտնի պատճառներով կասեցրել գործընթացը, դարձյալ Թուրքիան է այս իրավիճակից օգտվում և իր հերթին հայտարարում, թե սահմանները կբացվեն և արձանագրությունները կվավերացվեն տարածքներն Ադրբեյջանին վերադարձնելուց հետո: Թուրքիան, ըստ էության, ամեն ինչ վերադարձնում է ի շրջանս յուր, այսինքն՝ ելման կետին, և բնական հարց է ծագում, թե ինչի՞ համար էին այս արձանագրությունները, եթե հայ-թուրքական սահմանը պետք է բացվի ԼՂՀ հարցի կարգավորումից հետո միայն: Ստորագրելով այս արձանագրությունները՝ մենք Թուրքիային ազատեցինք մի մեծ հոգսից ես: Ելնելով իրավիճակից՝ մենք առաջարկում ենք հետ կանչել Հայաստանի ստորագրությունն այդ փաստաթղթերի տակից: Այդ կերպ միայն մենք կկարողանանք

խուսափել Թուրքիայի՝ ԼՂՀ հարցում կողմնակալ միջամտություններից, որոնք այսօր թե անմիջական և թե միջնորդավորված ձևով նկատելի են: Այսօր արդեն շատ հազվադեպ են դարձել նրան ուղղված մեղադրանքները, թե ինչու է փակել Հայաստանի հետ սահմանը և միակողմանիորեն շրջափակման դատապարտել հարևան երկրին: Թուրքիան ունի այդ հարցի պատասխանը՝ ես սահմանը բացելու մասին արձանագրություններ են ստորագրել, որոնց վավերացումը կասեցված է ՀՀ նախագահի և ԱԺ կողմից: Այսինքն՝ նա մեղադրանքը հեշտությամբ փոխանցում է Հայաստանի ուղղությամբ: Հիմա մեր տեսանկյունից նայենք հարցին. իշխանություններն անընդհատ հայտարարում են, թե հայ-թուրքական գործընթացով մենք ավելի շահեկան դիրքեր ապահովեցինք Հայաստանի համար: Ո՞ր են այդ շահեկան դիրքերից եկող նպաստավոր իրավիճակները, միջազգային հանրություն՞ն է սկսել մեզ ավելի շատ պաշտպանել զանազան ատյաններում, թե՞ մեր տրնտեսական հաջողություններն են աննախընթաց ան արձանագրել, ինչո՞վ է լավացել մեր վիճակը: Ուստի, նորից են կրկնում, մեր կարծիքով՝ պետք է հետ կանչել ՀՀ ստորագրությունն այդ արձանագրությունների տակից և մեկընդմիջտ փակել հենց թուրքական նախապայմաններով հարաբերություններ հաստատելու հարցը:


- Շատ հեռու չեն Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Դրանց սկսել են նախապատրաստվել գրեթե բոլոր կուսակցությունները: Ի՞նչ նոր մոտեցումներով է հանդես գալու ՀՅԴ Հայաստանի կազմակերպությունը:

- Այս ընտրություններին մասնակցելու մեր հիմնական նպատակը իշխանափոխության իրականացումն է: Դա է լինելու մեզ ուղղորդող գաղափարը, որը պետք է փորձենք իրականացնել սահմանադրական նորմերին համապատասխան: Մենք նաև հասկանում ենք, որ ունենք խիստ արատավոր ընտրական համակարգ և պետք է ամեն ինչ անենք, որպեսզի սահմանափակենք գործող ընտրական օրենսգրքի մեջ առակա այն մեխանիզմների գործադրումը, որոնք դուռ են բացում զանգվածային ընտրախախտումների համար: Այդ նպատակով կփորձենք համախմբել բոլոր շահագրգիռ ուժերին՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք ինչ ճամբարներ են ներկայացնում, և համատեղ կփորձենք վերահսկել ընտրությունների ողջ գործընթացը: Խորհրդարանական ընդդիմությունն արդեն առաջարկությունների միասնական փաթեթ է ներկայացրել: Մեզ համար գալիք ընտրապայքարում կարևոր է լինելու նաև էլեկտորատի իրական համակրանքը շահելը: Այսօր, գաղտնիք չէ, մենք ունենք մի վիճակ, երբ քվեատուփում առկա որևէ քաղաքական ուժի օգտին քվեարկված թերթիկների քանակը չի համապատասխանում այդ ուժի նկատմամբ իրական համակրանք տաժող մարդկանց քանակին: Դա է վկայում օրվա

իշխանություններից հասարակության մեջ պահպանվող դժգոհությունն ընտրություններից առաջ և հետո: Մեզ համար շատ կարևոր է մեծացնել իրական համակրանքը մեր նկատմամբ, որ նաև իրական հեղինակության ցուցիչն է: Ունենալով իրական համակրանք՝ մեր կուսակցությունը, ինչպես փորձն է ցույց տալիս, կարողանում է այդ համակրանքը վերածել իրական հաջողության: Այսօր էլ մենք կարող ենք բաց ճակատով հայտարարել, որ երբեք չենք մսխել մեր ժողովրդի վստահությունը, այլ ընդհակառակն, կատարել ենք շատ ավելին, քան թույլ էր տալիս ժողովրդի կողմից մեզ տրված մանդատների քանակը:

Եվ վերջում՝ քանի որ խորհրդարանական ընտրություններին անմիջապես հետևելու են նախագահական ընտրություններ, մենք այս երկուսը տեսնում ենք միմյանց հետ փոխկապակցվածության մեջ: Այսինքն՝ մեզ համար իշխանափոխության հարցը չի ավարտվելու ԱԺ ընտրություններով, որոնք, թեև, համապետական նշանակության են, բայց զիջում են նախագահական ընտրություններին իրենց քաղաքական նշանակությամբ և քաղաքացիական ակտիվության մակարդակով: Եթե մենք ինչ-որ բան չհաջողեցինք ԱԺ ընտրություններում, կփորձենք դա իրականացնել նախագահականում:

- Շնորհակալություն



Համահայկական համարկման մասին

Մկրտիչ Մկրտչեան

ՀՅԴ Բիւրոյի անդամ

Հայութիւնն իր նորագոյն անկախ ղեկավարութեան երկրորդ փուլին անկախ անբողջացնելու վրայ է: Սկզբնական օրօրանի խորհրդանշանաբանութիւնը սեղ սուած է առարկայականութեան եւ իրադրութեան: Խանդավառութիւնը սեղ-սեղ փոխարինուած է կասկածով, յաճախ անսարքերութեամբ, վերջերս ալ՝ վախով: Ռ՛ր կեանքով ազգովին. ո՛րն է մեր յաջորդ հանգրուանը: Ժամանակն է կասարելու առժամեայ հաշուեկէշ մը: Ի՞նչ ունեւինք անկախութենէն առաջ եւ ի՞նչ ունեւինք այսօր: Ի՞նչ ատելցած է եւ ի՞նչ ղակասած է: Ի՞նչ ղէտ է ընել հաւաքականութեան վաղուայ գոյութիւնը աղաւաղելու համար: Ի՞նչ ղէտ է ընել, որ ղէտով վաղը ատելի ընդունելի ըլլայ, քան՝ այսօրը: Հարցերը բազմաշեւակ ու բազմաթիւ են եւ անոնց քննութիւնը հաւաքական ճիգ կը ղահանջէ: Ամէն ինչ ալ մէկը միտին չափ կարելու կը թուի ըլլալ: Այդ իսկ ղահառով ցանկազում ղէտ է կասարել՝ առաջնահերթութիւններ ճշդելով: Ամէն ինչ կարելի չէ միաժամանակ նոյն թափով հետադարձել:

Այդ բոլորին ղահասխանը մէկ յօդուածի առարկայ չի կր-

նար ըլլալ: Սակայն սխալած ըլլալու նուագոյն հաւանականութեամբ կարելի է հաստատել, թէ այդ բազմաթիւ հարցերուն մէջ հայոց ղեկավարութեան ամրադնդման խնդիրը ունի յատուկ սեղ: Առանց ղեկավարութեան եւ անոր ամրութեան մնացեալ բոլոր խնդիրներու լուծումը կը դառնայ հարցական. առնուազն՝ ղակասաւոր: Իսկ այդ գործին համար անհրաժեշտ է հայկական հաւաքականութեան ուժերու անբողջական լարումը: Ուժերու լարում սեղի ունեցաւ արցախեան ազատագրական կռիւներու ժամանակ. ասիկա ալ շատ ղակասաւոր կերտով: Մեր օրերուն այդ գիտակից հաւաքական ճիգը թերեւս ատելի անհրաժեշտ է, քան արցախեան գոյամարտի օրերուն, որովհետեւ ներկայ ղայմանները նոյնքան անհազանգային ըլլալով հանդերձ չունին ղանգուածները դիրտ մտահոգելու ու խանդավառելու տեսանելի եւ ազդու յատկանիւթեր:

Այսօրուայ ղայմաններուն մէջ հաւաքական ճիգի արդիւնաւէտ գործածութիւնը կեանքադրէ հայութեան բոլոր հասնածներու բարոյահոգեբանական եւ առարկայական գործօններու համադրում, ինչ որ իր կարգին կը ղահանջէ այդ հասնածներու համարկումը՝ իրարու ասիճանական ընդդէմութիւնը: Հայութեան ղարագային այս գործը բա-

ւական դժուար ու ժամանակ խլող գործողութիւն կը խոստանայ ըլլալ, քանի անոր հասնածներու միջեւ սարքերութիւնները բաւական մեծ են՝ ղահասական ղահառներով: Հայաստանն իր ատենին բաժնուած ըլլալով նախ երկու, աղա՛ երեք կայսերական անբողջութիւններու միջեւ, այդ ճիգերը ունեցած են ընկերամշակութային սարքեր ղարգացումներ. այդ սարքերութիւններն ատելի եւս շեշտուցան ընդհանրականութեան եւ սարագրութեան ղահառով: Յեղատանութեան եւ ներկայիս Հայաստանէն տեսնական արագաղթի հետեւանով հայութիւնը դարձած է աշխարհագրի:

Հայութեան հասնածներու միջեւ համարկման որեւէ փորձ անիմաստ էր Խորհրդային Միութեան օրերուն, քանի կերտական իւրաքանչիւրութիւններու կողմէ որեւէ հարցի քաղաքական շահագործումը ընթացիկ երեւոյթ էր: Անկախութենէն ետք համարկումը սեղի կունենայ սարքային կերտով, բայց սեղ-սեղ նաեւ առաւել կամ նուագ չափով ծրագրուած ձեւով: Սփիւռքահայերու Հայաստան այցելութիւնները հաղորդակցութեան միջոցներու մասսայականացումով դարձած են ատելի յաճախակի՝

ընդգրկելով հայրենակիցներու ժամանակի ընթացքին աճող թիւ մը. լեզու եւ մտածում հաղորդակցութեան եւ փոխազդեցութիւններու հետեւանով կը դառնան ատելի ու ատելի հասարակաց: Վերջին ֆանամեակին չղակսեցան ծրագրեալ փորձերը: Անոնց կարգին են իննսունական թուականներու վերջաւորութեան սկսած Հայաստան-Սփիւռք խորհրդածողովները, հեռաձայնի արբանեակային սփռումի մէկէ ատելի կայանները, ՀՀ Սփիւռքի նախարարութեան գործունէութիւնը եւ վերջապէս՝ համահայկական գործող կառոյցներու ստեղծումը («Հայաստան» հիմնադրամ) կամ արդէն իսկ գոյութիւն ունեցող կառոյցներու համահայկական տարածումը (ազգային կուսակցութիւններ, մարզական ու բարեսիրական միութիւններ):

Համահայկական կառոյցներու բազմացումը կ'արագացնէ Հայաստանի եւ Սփիւռքի իրարու համարկումը: Հայաստանը եւ Սփիւռքը մէկ է ընկալել իբրեւ մէկ ամբողջութեան (հայրութեան) բաղկացուցիչ երկու (կամ բազմաթիւ) մասեր եւ երբեք իբրեւ տարբեր ամբողջութիւններ: Այս ինքնին հասկանալի դաժանօրէն գոհացումը կարեւոր չափով առաջքը կ'առնէ բախումներու, որոնք անխուսափելի են, երբ տարբեր մտայնութեան տեր մարդիկ հասարակաց գործի կը ձեռնարկեն: Իսկ բախումները թէկուզ բազմաթիւ ու յաճախակի, բայց՝ ատելի սկար կը լլան, երբ բոլորը սկիզբէն մասնակցած են գործի ծրագրումին եւ կը դառնան իրար հետ ծրագրութեան: Կազմուած ծրագրներու գործադրութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ այդ կառոյցը եւս «խօսարան»ի համար ստանալով գիտակից հանրութեան առջեւ արհամարհանքի

առարկայ չդառնայ: Պայման է նաեւ, որ այսպիսի կառոյց մը վճռական կերպով չզբաղի բաղադրող հաստատման գոյս ներքին հարցերով, այլ միայն՝ ամբողջ հասարակականութեան առնչուող հարցերով:

Անուշտ, այս մտահոգութիւնը նոր չէ: Վերեւ նշուած եւ այլ նախաձեռնութիւններ այս մտահոգութեան արտայայտութիւնն են: Սակայն ցարդ ներկայացուած ու դեռ իրենց սաղմնային վիճակին մէջ գտնուող ծրագրները ունին լուրջ թերութիւններ, որոնք կասկածելի կը դարձնեն իրենց աղագայ յաջողութիւնը: Ատելին՝ իրենց բնոյթով անոնք հայրութենէն ներս նոր դառնակումներ յառաջացնելու կարելիութիւնը կը ստեղծեն: Անոնցմէ ոմանք կը միտին Սփիւռքը նոր՝ համազարդութեային կերպով կազմակերպելու (Սփիւռք ընդդէմ որո՞ւ): Ուրիշներ իրենց բնոյթով երեւութապէս համահայկական, սակայն խորքին մէջ հակակերպին բանալին ի յառաջագունէ յսակ ու մեծնջեմական կերպով որոշած ըլլալով չեն կրնար արտանայ ընդունելի ըլլալ հայկական ամբողջական հասարակութեան կողմէ:

Ընկերային ներկայի դայմաններուն համար կառոյց մը առաւելագոյն յաջողութիւնը կրնայ արձանագրել, եթէ կը յարգէ առնուազն ժողովրդավարութեան դայմանը, որովհետեւ անհասները (գոնէ անոնք, որոնք համազարդութեային հարցերով կը զբաղուին) յանձնառութեամբ լծուին աշխատանքի: Հետեւաբար՝ ընտրական գործընթացը անխուսափելի է, եթէ՝ սփիւռքեան դայմաններու մէջ շատ դժուար իրագործելի:

Ի հարկէ, համահայկական որեւէ կառոյցի հիմնական վայրը հայրենիքը մէկ է ըլլայ առանց բացառելու օժանդակ երկրորդ հասցէի մը միաժամանակեայ գոյութիւնը: Ազդեցիկ ըլլալու համար այդ կառոյցը մէկ է ըլլայ մեծական. ասիկա կը նշանակէ, թէ այդ կառոյցի որոշումները դարձապէս մէկ է ըլլան

գործադիր իշխանութիւններուն համար: Ասիկա իր կարգին կ'ենթադրէ, որ կառոյցը, ժողովրդավարութեան դայմանը ամբողջացնելու համար, խորհրդարանական նկարագիր մէկ է ունենայ: Այդ կառոյցը չի կրնար ըլլալ ինքն՝ խորհրդարանը (Ազգային Ժողով), քանի ան ստեղծուած է միայն ՀՀ տարածքին համար եւ կ'ընտրուի բացառաբար ՀՀ բնակչութեան կողմէ: Հետեւաբար մէկ է ստեղծել ընտրելուներէ կազմուած երկրորդ կառոյց մը, որ զբաղի բացառաբար համահայկական խնդիրներով (Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ, հայեւորք յարաբերութիւններ, Հայ Դատ, ՀՀ քաղաքացիութեան համահայկական հարցեր եւ այլ՝ սակաւին սահմանելի հարցեր):

Այս երկրորդ՝ համահայկական խորհրդարանը կարելի է անուանել ծերակոյտ (սենատ), այնպէս, ինչպէս գոյութիւն ունի անիկա որոշ թիով երկիրներէ ներս: Ներկայացուցչութիւնը մէկ է ըլլայ համեմատական՝ ըստ իրաւանչիւր համայնքի ներկայացուցած թիւին:

Կասկածէ վեր է, որ այսպիսի կառոյց մը նոյնպէս բախումի միջավայր է, սակայն միաժամանակ՝ փոխադարձ առարկայական ծանօթացման ու յանդիմանման մեծացման միջավայր է:

Ժամանակը հասած է, որ զգացականութիւնը փոխարինուի ուժական ու արդիւնաւէտ առարկայականութեամբ: Այդ ձեւով միայն կարելի է փարատել հայրութեան վրայ կուսակալող ամոլերը, որոնք փոքորիկի մը նախանշան համարուելու բոլոր տեսակները ունին. փոքորիկ՝ որ կանխարգիլելու կամ ասկէ դաժնադարուելու կարողականութիւնը ունի հայրութիւնը:


ԱՐԱՐԱ. 1918 Թ. ՎՃՌՈՐՈՇ ԴԵՂՔՈՒՄԸ

Լևոն ՇԻՐԻՆՅԱՆ

Քաղաքագիտության դոկտոր

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, ինչպես հայտնի է, սրվեցին հակասությունները խոշոր տերությունների միջև նաև Մերձավոր Արևելքում: **Գերմանիան**, որ համաշխարհային տիրապետության հայտ էր ներկայացրել, կառուցելով Բաղդադի երկաթուղին, սպառնում էր Անգլիայի մերձավորարևելյան գերիշխանությանը: Իր կողմը քաշելով Թուրքիային, նա ձգտում էր գրավել Մուեզի ջրանցքը, ձեռքն անցկացնել Մոսուլի նավթը, զրկել անգլո-ֆրանսիական կողմին Պաղեստինում և Սիրիայում ռազմածովային բազաներից: **Անգլիան**, փորձելով ոչնչացնել իր գլխավոր ախոյանին, Գերմանիային, նրանից խլելով իր գաղութները, ցանկանում էր Թուրքիայից գրավել (ստանալ) Միջագետքը, Պաղեստինը և ամուր տեղավորվել Եգիպտոսում: **Ֆրանսիան** ցանկանում էր պարտության մատնել Գերմանիային, ստանալ Սիրիան, իսկ **Ռուսաստանը** նախատեսում էր բաժանել Օսմանյան կայսրությունը՝ նրանից ստանալով Արևմտյան Հայաստանը, գրավել նեղուցներն ու Կ.Պոլիսը:

Թուրքիան, զինակցելով պրուսական միլիտարիզմին, նպատակ էր դրել պահպանել իր տիրույթները 1914 թվականի սահմաններում՝ ընդարձակելով միաժամանակ կայսրությունը Բալկանյան թերակղզու հարևանների ու Ռուսաստանի կովկասյան տիրույթների հաշվին¹՝ հրնթացս լու-



1. Стів Готовцев А., Операции в Палестине и Сирии, 1915-1918 гг. — «Военно-исторический журнал» (Москва), 1940, N 9, էջ 3:



Գեներալ Ալեքսին բրիտանական ռազմաչակատում

ծելով նաև Հայաստանի ոչնչացման և հայության բնաջնջման ազգային գերխնդիրը:

Ինքնին հասկանալի է, որ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելով (1914 թ. նոյեմբերի 12-ին Թուրքիան «սրբազան պատերազմ» հայտարարեց Անտանտի տերություններին) գոտեմարտը տեղափոխվում էր միջինարևելյան թատերաբեմ:

Աշխարհակալ տերությունների շահերի ներհակության և ներդաշնակության այս շքահանդեսում էլ ժամանակին ծնվեց Օսմանյան կայսրության անդամահատման Սալթու-Պիկո գաղտնի պայմանագիրը: Բնական է, որ պաղեստինա-սիրիական ճակատը ընդգրկվեց անգլո-ֆրանսիական և թուրք-գերմանական հակամարտության ընդարձակ գոտի՝ դառնալով միջինարևելյան անգլո-թուրք-գերմանական ռազմաբեմի կարևորագույն օղակը:

Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում ռազմական գործողությունների աշխարհագրությունը սիրիա-պաղեստինյան ճակատում իր մեջ ընդգրկեց Միսիայի թերակղզին: Այն Եգիպտոսի հետ միասին, որի հանդեպ Անգլիան իր խնամակալությունը հայտարարել էր 1914 թվականի դեկտեմբերի 17-ին, գտնվում էր Անգլիայի ազդեցության տակ: Այս թատերաբեմի արևմտյան և հյուսիսային ափերը (Հայկական Կիլիկիա) ողողում էր Միջերկրական ծովը: Այդ ծովափերը ենթակա էին Անտանտի երկրների ռազմական նավատորմների ազդեցությանը, ունեին լավ նավահանգիստներ (Ալեքսանդրեթ, Բեյրութ, Հայֆա):

Հարավ-արևմտյան մասում ռազմաբեմն իր մեջ ընդգրկում էր Եգիպտոսի արևելյան մասը, իսկ արևելքում՝ միախառնվում Արաբական անապատին, հյուսիսում՝ սահմանակցում կենտրոնական (թուրքական) Անատոլիային:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո ճակատի Սուեզի հատվածում թուրք-գերմանական բլոկը երկու անգամ փորձեց գրավել Սուեզի ջրանցքը: Առաջին անգամ, թուրքական մի զորաջոկատ, 500-600 մարդ նույնիսկ կարողացավ պոնտոններով անցնել աֆրիկյան ափ և ռազմաճակատի տվյալ հատվածում հարկադրել անգլիացիներին կուտակել զգալի քանակությամբ զորական ուժեր: Սակայն ռազմավարական խնդիրը՝ Սուեզի ջրանցքի գրավումը, ինչպես և սպասելի էր, հնարավոր չեղավ:

Թուրքական (գերմանական) ուժերի գործողությունների տապալումից հետո նախաձեռնությունը ռազմաճակատում վերջնականապես անցավ Դաշնակիցներին, և գոտեմարտը վերջնախաղ մտավ, ըստ էության, 1918 թվականի սեպտեմբերի կեսերին: Ճիշտ է, ճակատի գլխավոր հրամանատար, անգլիացի գեներալ Էդմունդ Ալեքսին, որն իր նոր պաշտոնին էր նշանակվել 1918 թ. ապրիլի վերջերին, նախատեսում էր թուրքերի ջախջախման գործողություն սկսել, սակայն արևմտյան (ֆրանսիական) ռազմաճակատում գերմանացիների մարտյան հարձակումը պարտադրում է պաղեստինյան (Դաշնակիցների) ուժերը շտապ կարգով տեղափոխել այնտեղ: Ուստի՝ «Մինչև սեպտեմբերի կեսերը, ինչպես գրում է Ա. Գոտովցկը, իրենց դրությունը բարելավելու նպատակով և աջ թևը ապահովելու համար անգլիացիները նախաձեռնում են տեղական նշանակության ռազմական գործողություններ: Իսկ բանակը զգալապես ուժեղանում է շնորհիվ Միջագետքից, Հնդկաստանից բերված ուժերի և ֆրանսիացիների ուժեղ ջոկատի»²:

Այդ ուժերը վճռական գործողությունների նախօրյակին տեղական նշանակության (դիրքային) իրենց մարտերը մղում էին Հարավային ու Հյուսիսային Պաղեստինի սահմանագծում: Գեներալ Ալեքսինի մտահղացումով թուրքական զորքերի հիմնական զանգվածը վերցվելու էր օղակի մեջ, որի համար գլխավոր հարվածը պետք է տրվեր

2. Նույն տեղում, էջ 13:.

երկու ուղղություններով. ձախից՝ ճեղքել թուրքական բանակի (հրամանատար՝ Ջևադ փաշա) ճակատը և, շուռ գալով Ռ-աֆատ գյուղի շուրջը, ճակատը տեղափոխել հյուսիս-արևելք. աջից՝ հարձակումը սկսելով մեկ օր ուշ, շեղել թուրքական զորքերի ձախ թևը դեպի հյուսիս: Երկու հատվածներով հարձակվող զորամիավորումները պետք է միանային Նաբլուսի շրջանում: Հաջողությունը պետք է զարգացվեր Սարանիի հովտում, Տուլ Կերամի ուղղությամբ՝ հեծյալ կորպուսի հիմնական զանգվածի անմիջական ներգրավումով, «հաղորդակցության հանգույցի» (Բեյզան, Էլ Աֆուլե) գրավման և հակառակորդի՝ դեպի հյուսիս նահանջը խափանելու նպատակով: Աջից գլխավոր հարվածը պետք է հասցներ 20-րդ կորպուսը և 2 դիվիզիաների կազմով հրետանին, իսկ ձախից՝ 21-րդ կորպուսը հինգ դիվիզիաների կազմով և ֆրանսիական ջոկատով: [Հորդանանից] դեպի հյուսիս հարվածելու էր ապստամբ արաբների ջոկատը:

8-րդ բանակից բացի, թուրքական ճակատը աջից պաշտպանում էին 7-րդ բանակը (հրամանատար՝ Մուստաֆա Քեմալ փաշա) և 4-րդ բանակը (հրամանատար՝ Մերսինլի Ջեմալ փաշա): Ռ-ազմաճակատի գլխավոր հրամանատարն էր հայտնի գեներալ Օտտո Լիման ֆոն Չանդերսը: Մասնավորապես, 8-րդ բանակի կազմում էր գերմանացիների Ասիական կորպուսը («Asian Korps») (երեք գումարտակ, երեք հրետանային մարտկոց, սակրավորների դասակը և հեծյալ դասակը, հրամանատար՝ գերմանական գնդապետ ֆոն Ֆրանկենբերգ ունդ Պրոշլիսց)³: Գերմանացի Գ. ֆոն Կուիլը գրում է, որ Պաղեստինում դրոշյան սպառնականության ուժեղացման հետևանքով 1918 թ. գարնանը «ասիական կորպուսն ուժեղացավ մի հետևակային գնդով, մի պահեստային հրաձգային գումարտակով և Մակեդոնիայից բերված մի սակրավոր վաշտով: Շուտով, դրանից հետո, հրաձգային գումարտակը նորից տարվեց»⁴: Մի այլ հեղինակի՝ Ա. Կիրպիչնիկովի տրվյալներով, Ասիական կորպուսն իր կազմում ուներ 16-րդ և 19-րդ հետևակային դիվիզիաները, 701, 702 և 703 գերմանական հետևակային գումարտակները⁵:

Հենց այս կորպուսի դիմաց էլ, ի մասնավորի, տեղակայված էր անգլիական 21-րդ հետևակային կորպուսը՝ իր կազմի մեջ ունենալով ֆրանսի-



Գեներալ Օտտո Լիման ֆոն Չանդերս

ական զորաջոկատը: Ընդամին, թուրքական ուժերին՝ 8-րդ բանակի պաշտպանության տեղամասում, «գլխավոր հարվածը նավատորմի հետ համագործակցությամբ պետք է հասցներ 21-րդ կորպուսը»⁶: Այսպիսով, Հայկական լեզեոնը, որը հանգամանքների բերումով հանդես էր գալիս Արևելյան լեզեոնի («Forces Aliie's du Levant») անվան տակ, տեղակայված լինելով անգլիական 21-րդ կորպուսի աջ թևում [«...այս ճակատին ձախ թևը կգտնվեր հնդիկ զորամաս մը, իսկ աջը՝ ալժիրյան ուժեր: Մեր լեզեոնը ստանձնեց Ռ-աֆաթ գյուղեն Արարայի բարձունքը երկարող կարևոր գծին պաշտպանությունը»՝ Խորեն քին. Աճեմյան], կարևոր դիրք գրավեց ֆրանսիական զորամասի («De'tachment Fracais de Palestine-Syrie») կազմում Ռ-աֆաթ (գյուղի) շրջանում, «իր դեմ ունենալով թրքական զորավոր դիրք մը՝ Արարա, ուր կգտնվեին 701 և 702-րդ գերման գումարտակները»⁷: «Հայ կտրիճներուն վիճակված

3. Տե՛ս Լудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., М., 1966, էջ 278:
 4. Куль Г., Крушение германских наступательных операций в 1918 году, М., 1935, էջ 51:
 5. Տե՛ս Կирпичников А., Конные массы в развитии прорыва.- «Военно-исторический журнал» (Москва), 1940, N 8, էջ 42:
 6. Նույն տեղում, էջ 44:
 7. Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը. վավերագրեր, Գահիրե, 1946, էջ 192:



Հայկական լեգեոն

եր գրավումը,- գրում է Ս. Պարթևյանը,- Արարաբլուրին, որուն բնական անառիկ դիրքերն ահեղորեն անբացնելով՝ թրքո-գերմաններն իրենց դիմադրության առանցքն ըրած էին գայն»⁸: Գնդապետ Ռոմիեռն, Արևելյան լեգեոնի հրամանատարը, ևս վկայում է, որ Արարան «գերմանացիք թրքական դիմադրության գորավոր առանցքը ըրած էին»⁹: Ընդ որում, երբ հայ «զինվորները հասած են ռազմաճակատ, թրքերը անմիջապես գորացուցած են իրենց ուժերը, այս անգամ բերելով նաև գերմանացի զինվորներ»¹⁰:

Բախտորոշ հարձակումն սկսվեց հանկարծակի, 1918 թ. սեպտեմբերի 19-ին, առավոտյան ժամը 7-ն անց 30 ըռպեին, հրացանային փոթորկալից կարճ նախապատրաստությունով, հարձակման համար նախատեսված 21-րդ կորպուսի տեղամասում: Դաշնակիցների գորագունդը, արագորեն ճեղքելով թուրքական ռազմաճակատը, ծավալվեց հյուսիս-արևելյան ուղղությամբ, դուրս գալով, առաջիկայում, օպերատիվ տարածություն: Ընդհանուր առմամբ, հետևակը փայլուն կերպով լուծելով իր վրա դրված պարտականությունը, պայմաններ ստեղծեց անապատի հեծյալ կորպուսի՝ Սարանի հովտով ճեղքման համար: Կեսօրին թուրքական 8-րդ բանակը ջախջախված էր և խառնիճաղանջ փախչում էր, իսկ Մուստաֆա Բենալի 7-րդ բանակը 20-րդ կորպուսի սեպտեմբերի 20-ի հարվածների տակ անկանոն նահանջում է: Թուրքերի վիճակը դառնում է ճգնաժամային: «Նրանց 7-րդ և 8-րդ բանակները շրջանցվում են թիկունքից»¹¹: Լիդլը Հարտը գտնում է, որ 1918 թվականի սեպտեմբերի 19-ին սկսված գործողությունը «ամենաարագ վճռական կամպանիաներից էր և համաշխարհային պատերազ-

մի ողջ պատմության ամենակատարյալ վճռական ճակատամարտն էր: Մի քանի օրերի ընթացքում թուրքական բանակը Պաղեստինում դադարեց գոյություն ունենալուց»¹²:

«Ճեղքումը,- գրում է ֆրանսիացի գեներալ Ռենե Տուռնետը իր հերթին,- շանթապաց էր և անբողջական»¹³: «Կարճ եղավ մենամարտը և սաստիկ,- հաղորդում է լեգեոնական Մ. Չարիկյանը,- անտեղիտալի էր թրքական դիմադրությունը և ուժգին, բայց կորովի էր ու զարհուրելի հայ զինվորի օրհասական քաջարի գրոհը»: Եվ «արագ ու անագորույն հարվածներուն տակ ճարճատեցավ բռնության որջը ու փլավ ճիվաղներու միջնաբերդը: Անարի թշնամին իր դեմ ցցված վրիժառու սվիններեն պաշտպանվելու անկարող՝ լքեց իր պաշտպանության բոլոր լավագույն դիրքերն ու բռնեց լեղապատառ փախուստի ճամբան»¹⁴: Այսպիսով, «սեպտեմբերի 19-ի առավոտյան Բ գումարտակը, քանի մը ժամվան մեջ ռազմագիծը ճեղքելով, կը վտարե թշնամին և ձեռք կանցնե Արարայի բարձունքը, որ մինչ այդ նկատված էր աննվաճելի դիրք մը» (Խորեն քին. Աճեմյան):

«Պարտությունը վճռական եղած էր ու նահանջը խուճապային»: Լուծված էր ռազմավարական հիմնախնդիրը: Ի վերջո, բացված էր ճամփան Սիրիայի ազատագրության, ճամփան Կիլիկյան Հայաստանի, դեպի թուրքական Անատոլիա: Կատաղի և հուսահատ հակահարձակումները չվերականգնեցին ո՛չ կորսված դիրքերը և ո՛չ էլ, մանավանդ, «գերմանացիի հավակնոտ գերմարդու պատիվը» (Տիգրան Հ. Պոյաճյան): «Այստեղ գտնվող հնդիկ զինվորներեն և ապա այլ բերաններե կհաստատվեք, որ դաշնակից կարևոր ուժեր մինչ այդ երեք անգամ հարձակած էին Արարայի բարձունքը գրավելու համար, բայց չէին հաջողած»¹⁵:

8. Պարթևյան Ս., Արարա: Հայկական լեգեոնը, Բ տպ., Իզմիր, 1919, էջ 87:

9. Պոյաճյան Տ. Հ., Հայկական լեգեոնը. պատմական հուշագրություն, Ուոթթաուն, 1965, էջ 129:

10. Աճեմյան Խ., Հայկական լեգեոնը.- Տարեգիրք «Համազգային»-ի-1953, Պեյրոս, 1952, էջ 73:


11. Строчков А. А., Вооруженные силы и военное искусство в первой мировой войне, М., 1974, էջ 570:

12. Лиддел Гарт Б., Правда о войне 1914-1918 гг., М., 1935, էջ 364:

13. Турнэс Р., Фош и победа союзников 1918 года, М., 1938, էջ 181:

14. Չարիկյան Մ., Արարայի փոթորիկը հայրենակր լեգեոնների 18-ն իր վարորդայնով.- «Կամավոր»-Արարայի թուրքական 10-րդ տարեդարձի առիթով, Գահիրե, 1928, էջ 43:

15. Աճեմյան Խ., Հայկական լեգեոնը, էջ 73:



Արևելյան լեզունը՝ «հայ զինվորը իր հերոսական կեցվածքով գամվեցավ ու թաղվեցավ իր գրաված դիրքերու մեջ, առանց քայլ մը իսկ ետ ընկրկելու, և մոտ քսան ժամ անընդհատ տևող այս կռվի մեջ <...> վերցուց իր վրա բոլոր ծանրությունը թրքոզերման միացյալ ահավոր ուժերու... մինչև թրքական ճակատի ու թուրք զորամասերու ընդհանուր քայքայումը»¹⁶:

Արժանվույն գնահատելով հայ զորականին՝ գեներալ Ալենքիս պետք է հայտարարեր. «Արևելյան լեզունը կամ Հայկական լեզունը կարևոր բաժին մը ունեցավ 19 սեպտեմբերի 1918 թվականի Պաղեստինի ճակատին վրա տեղի ունեցած մեծ ճակատամարտի ընթացքին: Ես ասով հպարտ եմ»¹⁷: [Հայկական լեզունի մասին լրացուցիչ տե՛ս Benoit d’Azy հոդվածաշարը.- «Revue d’Histoire diplomatique», 1939, janvier-mars; Kavallerie als schlachtentscheidende Waffe.-«Militarwochenblatt», Berlin, 1932, N 6, էջ 181-183]:

Արարայի ճակատամարտի աննախընթաց նշանակությունը Օսմանյան կայսրության ջախջախման և Անտանտի հաղթանակի գործում հասկանալու, հայ զորականի սխրանքի իմաստը ըմբռնելու համար, կարևոր է ռազմաճակատի տեղադրվածության ֆիզիկա-ռազմագիտական նշանակության գնահատականը: Գեներալ Ալենքիս զորավարական տաղանդի թելադրանքով ռազմաճակատի ընդգրկման հիմնական օղակին համընկավ այդ տեղանքի ռազմավարական հնարավորությունների առավելագույն շրջանակը (մասը):

«Ընդհանուր թրքական ճակատի ռազմական կարևոր կետերն էին,- գրում է Մ. Չարիկյանը,- Բաֆաթ Արարա լեռնաշղթան, ուր բնության վայրենությունը իր լրիվ կատարելագործումը ստացած էր իր ներկայացուցած դժվարին դիրքերովը: 15 մղոն երկարության մը վրա տարածված հարձակողական գծին էն կարևոր կեղծոնը այն լեռներն էին, որոնք կիշխեին բարձրեն տիրականորեն, աջ ու ձախ տարածված դաշտամասերուն վրա, դաշնակից բանակներուն կատարած ունե ռազմական շարժումներուն: Բաֆաթն ու Արարան ու Վատի Պալուտի (Հայկական լեզունի պահեստի գիծը.- հեղ.) անդնդախոր կիրճը, որպես անառիկ դիրքեր մեկ ամբողջություն մը կկազմեին, մինչև մոտակա Նաբլուս քաղաքը:

Բնականեն ամուր, սեպ ժայռերու ու անմատչելի ապարածներու այս զիրար գերազանցող գեհե-

նը, հաջորդական միջանցքներով իրար գողված դժվարանցանելի կիրճերու և բլուրներու այն շրջթան էր, ուր թուրքը Երուսաղեմի ճակատամարտեն վերջ իր այնքան խուճապահար փախուստի մեջ դյուրությամբ կրցած էր ժամանակին կասեցնել անգլիական բանակներու հաղթական առաջխաղացքը, և հոն՝ ամիսներե ի վեր աշխատած էր կազմակերպել ահեղ դիմադրություն մը, ապավինած անառիկ ու բնական ամրոցներու, և գերմանացի մեծ զորավար Լիման ֆոն Չանդերս փաշայի ռազմագիտական հանճարին:

Գերման միլիթարիզմը՝ իր զինվորական բոլոր հնարամտությունը չէր խնայած այս ճակատի ամրացման շուրջ. ան որքան երևույթով վայրի՝ այնքան ալ պաշտպանության տեսակետեն դժոխային էր դարձեր: Քանի-քանի՝ անգամներ հարձակող բանակներ ետ-ե՛տ ընկրկած էին մեծ կորուստներով, և քանի՛-քանի հարձակման փորձեր անհաջող վիժումի դատապարտված էին այս գեհենաշնորհ դիրքերու դեմ:

Ընդհանուր ռազմաճակատի վրա ունե՛ մեկ կողմեն ասպահով առաջխաղացում մը ունենալու համար հարկ էր խորտակել այս բնական ամրոցը, որ իր աննվաճ դիրքերովը այդ ճակատին փորձաքարը եղած էր, և ատով ալ կփրկեր ամբողջ թրքական ռազմաճակատին բախտը:

Հոն էր թուրքին բոլոր ուժը, հոն էր բռնության մեծագույն որջը, և հետևաբար՝ հոնկե պետք էր հարվածել թուրքին սիրտը ու խորտակել միջնաբերդը»¹⁸:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆ. ՊԱՀԱՊԱՆ «ՀԱՅ ՀՐԱԶԻԳՆԵՐԸ»

Հիրավի, չէր սխալվում հանրաճանաչ լորդը, թե դաշնակիցների հաղթանակը ձեռք բերվեց նավթային ալիքի հզոր հարվածով: Ուրեմն, որոշակի իմաստով, առաջին աշխարհամարտը պայքար էր աշխարհի նավթաբեր շրջաններին տիրանալու համար: Ու թերևս իրավացի է «նավթագետ» Գ. Երզինը՝ գրելով. «Գլխավոր վտանգը գալիս էր Օսմանյան կայսրությունից: Թուրքիայի՝ Գերմանիայի կողմում պատերազմի մեջ մտնելուց անմի-

16. Չարիկյան Մ., էջ 43:
17. Տե՛ս Չորավար Արամ Գարամանուկյանի կյանքն ու գործը, Ֆորթ Լի, Նյու Գրրոզի, 1998, էջ 212:
18. Չարիկյան Մ., էջ 42:



Գեներալ Պերսի Սայքս



Բեռլին-Բաղդադ երկաթգծի նախագիծը

ջապես հետո՝ աշնանը, նրա գորքերը սկսեցին սպառնալ պարսկական նավթավերանշակման շինություններին, որոնք գտնվում էին Աբադանում»¹⁹: Վտանգված էր Բասրան՝ հանգույցը Անգլիայի հետ նավթային կապի: Եվ «Նավթահանքերի անվտանգության ապահովումը, ինչպես նաև Պարսկաստանում գերմանական քայքայիչ գործունեության դեմ պայքարը գլխավոր նպատակներ էին»²⁰: «Դրա համար էլ Անգլիան ձեռնարկում է միջոցներ և ստեղծում համապատասխան պայմաններ»:

...Դեռևս 1916 թվականի մարտին անգլիական կառավարությունը Իրանի հարավ է գործուղում հատուկ առաքելություն՝ գեներալ Պերսի Սայքսի (Sikes Sir Percy Nobesworth) գլխավորությամբ: 1917 թվականի մարտի 25-ին Իրանի կառավարությունը թույլատրում է անգլիացիներին կազմակերպել հարավիրանյան հրաձիգների կորպուսը²¹: Կորպուսի՝ «South Persia Rifles» («Հարավային Պարսկաստանի հրաձիգներ»), «կորիզը» կազմեցին հայերը, «որուն նպատակն էր, - գրում է Հայաստանի պատմության լավագույն գիտականներից Հրանտ Փաստերմաճյանը, - պաշտպանել կենսական նշանակություն ունեցող այդ շրջանը գերմանա-թուրքական թափանցումի դեմ»²²:

Հայկական զինուժը, ինչպես հասկանում էր, այս խնդիրը ևս լուծեց քաջությամբ և արժանապատվությամբ²³:

Իրավացի է, հետևապես, աշխարհամարտի անգլիացի ճարտարապետներից Ու. Չերչիլը, գրելով, որ հենց այն պահին, երբ պատմության

մեջ չտեսնված ոճիրներով թուրքերը հասան իրենց նպատակին, «փլվեց նրանց ողջ պետությունը և Թուրքիայի ողջ ընկերային կազմակերպությունը»²⁴: Ու ստորաքարշությամբ հանձնվեց Գաշնակիցների ողորմածությանը՝ հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում: Մուդրոսի զինադարարի (1918 թ., հոկտեմբերի 30) 25 հողվածներից 4-ում (հողված 4, 11, 14, 24) ամփոփվեց, այս կամ այն նկատառումով, առաջին աշխարհամարտի ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ*:

Իսկ պրուսական միլիտարիզմի ու գերմանական դասական փիլիսոփայության հայրենիք Գերմանիան պատժվեց «ուժեղ և տոկուն» հայկական զինուժի բազուկի հարվածով [նաև], քաղաքակրթության ու առաջադիմության թշնամի օսմանյան ճիվաղի՝ XX դարի Մեծ ոճիրը հովանավորելու համար:

19. **Ергин Д.**, Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть. Пер. с англ. М., 1999, էջ 191:

20. Նույն տեղում:

21. Տե՛ս **Иванов М. Н.**, Национально-освободительное движение в Иране в 1918-1922 гг. М., 1961, էջ 15-16:

22. **Pasdermajian H.**, Histoire de l'Arménie. Depuis les origines jusqu'au traité de Lausanne. Quatrième édition. Paris, 1986, էջ 415:

23. Մանրամասները տեսնել նաև **Архив внешней политики России, эбЭ№ 5 Канцелярия МИД.**, 1917, г. 470, қ. 52, р. 127:

24. **Черчилль У.**, Мировой кризис. Пер. с англ. М.-Л., 1932, էջ 278:

* «30 հոկտեմբեր 1918-ին, - գրում է Շ. Թորիկյանը, - դաշնակիցներուն կողմն պարտված Թուրքիան ստորագրեց Մուդրոսի զինադարարը: Հայկական գորքեր վերագրավեցին Կարսը, Արդահանը և Օրբին, և իբրև արդյունք՝ Հայկական Հանրապետությունը ունեցավ 54 հազար քառ. կիլոմետր տարածություն մը» (Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 21):

Նոր տեղափոխված Միացյալ Նահանգներում Վրաստանի հակառուսական լոբբիստական գործունեության մեջ

Կարեն Վերանյան



**Նոր միսուններ վրաց-ռուսական
տեղեկագրական դասերազմում.
ընդհանուր ակնարկ**

Միացյալ Նահանգների օրենսդիր ու գործադիր իշխանությունում իր լոբբիստական գործունեությունը էապես ակտիվացրել է Վրաստանի կառավարությունը հատկապես 2003 թ. «վարդերի հեղափոխությունից» հետո, երբ իշխանության եկած նոր ուժերը սկսեցին ակտիվ համագործակցել պաշտոնական Վաշինգտոնի հետ: Ընդ որում, գալով իշխանության՝ Վրաստանի գործող ղեկավարությունը՝ ի դեմս նախագահ Մ. Սահակաշվիլու, որդեգրեց բավական խիստ հակառուսական քաղաքականություն, ինչը և իր արտացոլումը գտավ ԱՄՆ-ում Վրաստանի շահերի լոբբիստական գործընթացներում:


ԱՄՆ-ում Վրաստանի լոբբիստական գործունեությունն էլ ավելի ակտիվացավ հատ-

կապես 2008 թ. օգոստոսյան վրաց-հարավօսական պատերազմից հետո: Ռազմական գործողություններին անմիջապես հաջորդեցին պատերազմական գործողությունները տեղեկատրվական դաշտում: Վրաստանի ու Ռուսաստանի միջև կտրուկ ակտիվացած նախկին տեղեկատրվական պատերազմը հիմնականում վրացական կողմի նախաձեռնությամբ բավական կարճ ժամանակահատվածում ստացավ միջազգային լայն հնչեղություն: Վրաստանի իշխանության ներկայացուցիչները ջանք չէին խնայում եվրոպական կառույցներում ու հատկապես Միացյալ Նահանգներում հակառուսական լոբբիստական գործունեության ակտիվացման ուղղությամբ: ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր ինստիտուտներում Վրաստանի լոբբիստական գործունեության ակտիվացման հարցում Վրաստանի իշխանություններին զգալիորեն աջակցեցին երկրի նախագահ Սահակաշվիլու ամերիկ-

յան «մտերիմ գործընկերները»: Մյուս կողմից, եվրոպական կառույցներում սկսեց ակտիվանալ վրացական լոբբիստական վեկտորը՝ շնորհիվ հիմնականում մերձբալթյան երկրների ղեկավար շրջանակների, որոնք ամեն կերպ աջակցում էին Սահակաշվիլու հակառուսական քաղաքական գծին՝ առաջ մղելով ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության խնդիրը: Սահակաշվիլու նախագահության շրջանում Միացյալ Նահանգներում վրացական լոբբիզին մեծ աջակցություն է ցուցաբերում նաև Թուրքիան, որը ձգտում է Վրաստանի հակառուսական վեկտորին աջակցման միջոցով ի հաշիվ ռուսականի ընդլայնել իր դիրքերը Հարավային Կովկասում: Վրաց-թուրքական լոբբիստական համագործակցությունը նոր թափ ստացավ հատկապես վրաց-հարավօսական պատերազմից հետո,

ների հանձնաժողովների կառավարման, լրատվամիջոցների հետ կապերի հաստատման և այլ ոլորտներում: 2009 թ. սկզբներին Վրաստանի կառավարությունը կես տարվա ժամկետով \$300.000 ընդհանուր արժողությամբ պայմանագիր ստորագրեց այս լրբիստական ընկերության հետ: Չեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, ընկերությունը պարտավորվեց ապահովել Վրաստանի կառավարությանը լրատվական և հասարակական հարաբերությունների խորհրդատվությամբ՝ ուժեղացնելու «Վրաստանի կառավարության հեղինակությունը»: Public Strategies ընկերությունում Վրաստանի հարցերով զբաղվելու էին ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցության որոշ ազդեցիկ ներկայացուցիչներ՝ Ջեֆ Էլլերը (Jeff Eller), որը նախագահ Բ. Բլինթոնի ժամանակ ղեկավարում էր Սպիտակ տան ՋԼՄ-ների հետ կապերը, Ռոբերտ Լյուդկեն (Robert Ludke)՝ բյուջետային ու հարկային հարցերով դեմոկրատական կուսակցության նախկին վերլուծաբանը:

Վրաստանի կառավարությունը Կոնգրեսում և գործադիր իշխանությունում իր շահերը լրբիցնելու նպատակներով արդեն համագործակցում է երկու խորհրդականների՝ Գրեգորի Մանիատիսի և Դանիել Կունինի հետ, որոնք հանդիսացել են նախագահ Սահակաշվիլու խորհրդականները մի քանի տարիներ շարունակ: Նրանց հետ ստորագրված պայմանագիրը արժեցել է \$470.000, որով նախատեսվում է Վրաստանի արտաքին քաղաքականությունում և առաջին հերթին





Glover Park Group-ի կապերը

Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում ապահովել երկրի կառավարությանը ռազմավարության և հաղորդակցությունների խորհրդատվությամբ:

Վրաստանի կառավարությունը դեռևս 2008 թ. օգոստոսին \$320.000 ընդհանուր արժողությամբ պայմանագիր է ստորագրել մեկ այլ ազդեցիկ, ռազմավարական հաղորդակցությունների ոլորտում մասնագիտացած լրբիստական կազմակերպության՝ Glover Park Group ընկերության հետ: Ընկերության հետ Վրաստանի համագործակցության նպատակներից մեկն էլ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցի լրբիստական աջակցումն էր: 2009 թ. ընկերությունը իր լրբիստական գործունեությունից ստացել է տարեկան \$4.410.000 եկամուտ, ընկերության լրբիստական ծառայություններից օգտվել են այնպիսի առաջատար ու հեղինակավոր կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Կոկա-Կոլա» ընկերությունը, «Ամերիկյան բանկիրների ասոցիացիան» և այլք:

Պաշտոնական թրիվիսիի հետ լրբիստական ոլորտում հաս-

տատված համագործակցությունում ավանդական գործընկերներից է Orion Strategies ընկերությունը, որը 2008 թ. Վրաստանի կառավարությունից ստացել էր \$150.000՝ Վրաստանի շահերը լրբիցնելու համար: 2004 թ. ի վեր ընկերությունը Վրաստանի կառավարությունից ձեռք է բերել \$800.000 ընդհանուր արժողությամբ ֆինանսական հատկացումներ: Սահակաշվիլին Վրաստանի շահերը ԱՄՆ-ի օրենսդիր ու գործադիր իշխանությունում լրբիցնելու հարցում մեծապես վրստահում է նաև հայտնի լրբիստ Ռենդի Շենեմանին (Randy Scheunemann) և հաստատել է նրա հետ անձնական կապեր: Վերջինս հանդիսանում է ԱՄՆ-ի նախագահի հանրապետական թեկնածու Ջոն Մաք-Բեյնի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականը: Վրաստանի կառավարությունը համագործակցային կապեր է հաստատել նաև Chlopak, Leonard Schechter Associates ընկերության հետ:



Chlopak Leonard Schechter & Associates-ի կապերը

Orion Strategies-ի կապերը

Ռուսաստանյան հակալոբբինգը

2003 թ. վարդերի հեղափոխությունից հետո Միացյալ Նահանգներում վրացական լոբբիստական գործունեության ակտիվացմանն ու արդյունավետության բարձրացմանը էապես նպաստեցին այդ շրջանում ԱՄՆ-Ռուսաստան բավական լարված փոխհարաբերությունները: Ավելին, կողմերի միջև խորացած տարաձայնությունները մեծապես բացասաբար էին ազդում Միացյալ Նահանգներում ռուսական լոբբիստական գործունեության ակտիվացման վրա: Միացյալ Նահանգներում հակառուսական լոբբիստական գործունեությունն իր գագաթնակետին հասավ հատկապես 2008 թ. վրաց-հարավօսական պատերազմից հետո, երբ վրացական լոբբինգի ներկայացուցիչները սկսեցին առավել ազատ և սուր քննադատություններ հնչեցնել Կրեմլի ուղղությամբ: Իրավիճակը զգալիորեն փոխվեց, սակայն, Բարաք Օբամայի իշխանության վերջին շրջանում, երբ ԱՄՆ-Ռուսաստան հարաբե-

րությունները թևակոխեցին նոր հարաբերությունների բարելավման փուլ, ինչի արդյունքում Միացյալ Նահանգներում մի կողմից որոշակիորեն դիրքերը զիջեց վրացական լոբբինգը, մյուս կողմից՝ նոր իրավիճակը հնարավորություն տվեց ռուսական կողմին առավել ակտիվ աշխատելու վրաստանյան լոբբիստական գործունեության հակառուսական վեկտորի դեմ:

Վերջին շրջանում պաշտոնական Մոսկվան իր լոբբիստական գործունեությունը հիմնականում կենտրոնացնում է ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության շուրջ տարվող գործընթացների զսպման ու դադարեցման ուղղությամբ: Մյուս կողմից՝ ռուսական կողմը զգալի ջանքերի շնորհիվ կարողացել է Միացյալ Նահանգներում և միջազգային հարաբերություններում առհասարակ վրաց-հարավօսական դեպքերի հետ կապված էապես կոտրել Վրաստանի կողմից իրեն տրված «ազդեցորի» անիրատեսական պիտակը:

ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության՝ լոբբիստական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ

2008 թ. տարեկան հաշվետվության համաձայն, 2008 թ. առաջին վեց ամիսների կտրվածքով Ռ-Դ կառավարությունը Ketchum հաղորդակցությունների գծով մասնագիտացած հեղինակավոր լոբբիստական կազմակերպությանը հատկացրել է \$2.436.000 գումար՝ «Մեծ ութնյակում» որպես նախագահողի՝ Ռ-Դ դերի քարոզման նպատակներով: Ստորագրված պայմանագիրը նախատեսում էր նաև ընկերության կողմից բազմակողմանի հաղորդակցությունների ապահովում՝ լրագրողների ու քաղաքական գործիչների հանդիպումների կազմակերպում, տեղեկատվական նյութերի պատրաստում և այլն: Ռ-Դ կառավարությունը պայմանագիր է ստորագրել մեկ այլ լոբբիստական ընկերության՝ Integrated Solutions Group կազմակերպության հետ՝ լոբբինգի ու կառավարական հարաբերությունների զարգացման նպատակներով (պայմանագրի արժողությունը չի ճշտված):

Թուրքիայի ռազմասարդյունաբերական համալիրի զարգացումը որդես սարածաբազանային ռազմաֆաղափական իր դերակատարության բարձրացման կարևոր բաղադրիչ

Լևոն Հովսեփյան
Թուրքազե, փորձազե

Ինչդեռ Օսմանյան կայսրության ժամանակաբաժանում, այնդեռ էլ Հանրապետական Թուրքիայում միշտ առանձնահատուկ դեր է վերադասված եղել բանակին: Հանրապետական Թուրքիայի հիմնադրումն ուղղակի կապված է այդ երկրի բանակի հետ, քանի որ հենց դրա միջոցով ադախովվեց այդ երկրի «ազասագրումն արևմտյան ինդերիալիզմից» և զինվորական վերնախավը դարձավ այդ երկրի ֆաղափական ղեկավարությունը, իսկ բանակի բարձրագույն հրամանատարությունը՝ հասարակական-ֆաղափական կյանքի ուղղորդիչ ուժն ու վերահսկողը: Չնայած հանրապետության սկզբնական տարիներին բանակը չխառնվեց արտաքին ֆաղափական խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ այն ներդրված էր երկրի ներսում «ռազմական գործողությունների» իրականացմանը, ինչդեռ օրինակ՝ 1925 թ. բռնկված ֆրդական ադասամբության և 1937-1938 թթ. Դերսիմի իրադար-

ձությունների դարադայում¹: Եվ, ահա, արդեն 1970-ականներին թուրքական բանակը, օսմանյան ավանդույթների Եարունակմամբ, իրականացրեց ևս մեկ «արտաքին ֆաղափական օդերացիա»՝ բռնազավթելով Կիդրոսի հյուսիսային մասը և սեղակայեց իր սոսրաբաժանումները, որոնք մինչև օրս զոնվում են այնտեղ (Եուրջ 35-40 հզ.): Հաջորդ նմանատիղ օդերացիան իրականացնելու համար նղասավոր դայմաններ ստեղծեց ԽՍՀՄ-ի փլուզումը: 1990-ականների սկզբներին Թուրքիայի ռազմաֆաղափական ղեկավարությունը հսակ դլաններ էր մԵակում Հայասան և Վրասան ռազմական ներխուժում իրականացնելու համար, և այդ ուղղությամբ արդեն ամենաբարձր մակարդակով դասրասություններ էին սեսել²: Հյուսիսային Իրաֆ թուրքական զինուժի դարբերական ներխուժումները նույնդես այդ համատեսֆսում կարելի է դիսարկել: Այս համառոտ դիսարկումը կա-

1. 1925 թ. Թուրքիայում բռնկվեց ֆրդական ադասամբություն՝ Շեյխ Սայիդի զլխավորությամբ, որը դաժանորեն ճնշվեց թուրքական բանակի կողմից: Դա, փաստրեն, հանրապետական Թուրքիայում բանակի կողմից ֆրդերի հանդեղ իրականացված առաջին լուրջ ռազմական գործողությունն էր: 1934 թ. հունիսին ընդունվեց վերաբնակեցման մասին օրենք, որով նախատեսվում էր ոչ թուրք բնակչությանը վերաբնակեցնել թուրքական մեծամասնություն կազմող սարածֆներում, այսինքն՝ սա թուրքացման իրավական ադախովումներից մեկն էր: 1936 թ. հիմնականում ալևի ֆրդերով ու զազաներով բնակեցված Դերսիմի Երջանում մոցվեց ռազմական կառավարում, որը նղասակ ուներ խաղաղեցնելու անհնազանդ բնակչությանը, որոնք դայֆարում էին թուրքացման ֆեմալական ֆաղափականության դեմ, իրենց կրթական, կրոնական ու այլ ազասությունների համար: 1937 թ. ադասամբության առաջնորդ Մեյիղ Ռըզան իր մի խումբ համախոհների հետ մահատասժի ենթարկվեց: Իսկ 1938 թ. արդեն թուրքական բանակն անցավ վճռական գործողությունների, որի արդունֆում, ըստ թուրքական դաԵոնական սեղեկասվության, զոհ է զնացել Եուրջ 13 հզ. խաղաղ բնակիչ, 12 հազարն էլ սեղահանվել: Այլ աղբյուրների սլյալներով՝ զոհերի թիվը հասնում էր սասնյակ հազարների: Թուրքիայի ռազմաֆաղափական ղեկավարության մոտ դեռ նախկինում եղել է հսակ մսարություն այդ սարածաբազանը ռազմականացնելու, թուրքական դեսական վերահսկողություն հաստատելու և «մաֆրազերժելու» համար: Martin van Bruinessen, "Genocide in Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds (1988)", in: George J. Andreopoulos (ed), Conceptual and historical dimensions of genocide. University of Pennsylvania Press, 1994, pp. 141-170. Seyfi Cengiz, DERSİM SOYKIRIMININ KRONOLOJİSİ, http://www.zazaki.de/turkce/dersim_soykiriminin_kronolojisi.htm, 1937-1938'de Dersim'de neler oldu?, Taraf, 16.11.2008

2. 1993 թ. օգոսոսին Թուրքիայի վարչադես Թ. Չիլլերը դիմել էր թուրքական խորհրդարան՝ Հայասանի սահմանի երկայնֆով ՉՈՒ մոթիլիզացնելու և Նախիջևանը «հայկական ագրեսիայից» դաԵոդանելու նղասակով: Հայասան ներխուժելու հարցը նույնիսկ ֆննարկվել է 1993 թ. հոկտեմբերին կայացած Թուրքիայի Ազգային անվանագության խորհրդի նիսում: Թուրքիայի համար որդես դասրվակ էր ծառայելու կամ ֆրդական գրոհայինների ճամբարների գոյությունը Հայասանում, կամ էլ Նախիջևանի դաԵոդանությունը: Steu Leonidas T. Chrysanthopolous, Caucasian Chronicles, Nation Building and Diplomacy in Armenia 1993-1994, USA, 2002, pp. 76-78.



Աջ կողմում՝ Գեներալ Շադի Էրգյուվենչ

սարելով՝ նկատենք, որ Թուրքիայի համար իր ռազմական ներուժն ու հնարավորությունները ծառայում են սարածաբանային մակարդակում իրականացվող ֆաղափականությանն ու ունեցած հավակնությունները կյանքի կոչելուն: Սակայն փոխվում են ժամանակները, և այդ երկիրը նույնպես փորձում է համարժեք դասասխանել ժամանակի դաշտաններին և արդեն ռազմական հզորությունն օգտագործել ավելի «ֆաղափակիր» մեթոդներով՝ փորձելով սարքեր սարածաբաններում, որտեղ ունի աշխարհաֆաղափական հավակնություններ, մեծացնել իր ռազմաֆաղափական ազդեցության լծակները՝ Բալկաններ, Մերձավոր Արևելք, Կովկաս ու Կենտրոնական Ասիա: Այդ սարածաբանների մի շարք երկրներին Թուրքիայի կողմից սրամադրվող ռազմական ու ռազմաստեխնիկական աջակցությունը հետադարձում է իր իսկ ռազմաֆաղափական դիրքերի ամրադնդման նպատակը: Դա լավագույնս է երևում հասկալիս Ալբանիայի, Բոսնիայի, Վրաստանի ու Ադրբեջանի դարազայում: Իսկ այդ երկրի կողմից սեփական ռազմաարդյունաբերական համալիրի գոյությունը հնարավորություն է սալիս ավելի անկախ ու ազատ գործել այդ ուղղությամբ, բարձրացնել իր հեղինակությունն ու կեղծը, դառնալ սարածաբանում առաջատար ռազմական ուժ:

Թուրքական բանակի թուակառու գեներալ Շ. Էրգյուվենչն իր հոդվածներից մեկում անդրադառնալով

Թուրքիայի աշխարհագրական-ռազմավարական դիրքին՝ ընդգծում է, որ աշխարհագրական դիրքն ու ռազմական ներուժը կազմում են երկրի ռազմական ու ռազմավարական արժեքը: Թուրքիայի աշխարհագրական դիրքը դիտվում է որպես «նախանձելի ռազմավարական-ռազմական արժանիք»³: Մեկ այլ թուրք գեներալի բնորոշմամբ, Թուրքիան իր գեոստրատեգիական դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերուկում», հանդիսանալով էներգետիկ սարանցիկ սարածք, միաժամանակ երաշխավորված չլինելով այդ սարածաբաններից եկող սարքեր մարտահրավերների ու սղառնալիքների նկատմամբ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու ֆաղափական դաշտաններին համադաստիսանող ՁՈՒ⁴: Թուրքիայի ՁՈՒ ԳՇ նախկին ղեկ Ի. Բաբուրը նշել է. «Մեր երկրի օրջակայքը լի է խնդիրներով և այդդիսի աշխարհագրության մեջ գտնվող ոչ հզոր դեռությունները կենսունակ չեն: Ազգային հզորության հիմնական սկզբունքներից մեկը ռազմական ուժն է: Ազդեցիկ և հզոր Ձինված ուժերը ուղղակի կաղված են երկրի գոյության հարցի հետ»⁵:

Զնայած Թուրքիան իր բանակի ռազմաստեխնիկական աղաժողովումն իրականացնում էր արևմտյան երկրներից ձեռք բերվող սղառազինության հաճվին, այնուամենայնիվ խնդիր դրվեց ստեղծել սեփական ռազմական արդյունաբերությունը: Վերջին սարիներին այդ երկիրը գրանցել է որոշ հաջողություններ ռազմաարդյունաբերության ոլորտում, ինչի շնորհիվ աղաժողովում է ոչ միայն իր բանակի կարիքների մի որոշ մասը, այլ նաև փորձում է կրճատել իր կախվածությունն այլ երկրների ռազմաստեխնիկական մասկարարումներից: Բացի այդ, սեփական ռազմաարդյունաբերության գոյությունը դիտվում է սարածաբան



Նմուշ ASELSAN-ի արտադրանքից

3. Şadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998.
 4. http://www.ssm.gov.tr/browser_tr.asp?srcURL=library/docs/tr/kurumsal/SSM_20_yil.htm
 5. Genelkurmay Başkanı'ndan sert sabah mesajları..., Milliyet, 17.12.2009.



HAVELSAN-ի գործարանը

նում ռազմական գերակայությունը ընդլայնելու կարևորագույն գործոն: Չնայած Թուրքիան ռազմական սեխնոլոգիաների ոլորտում դեռևս չի համարվում առաջատար, սակայն ռազմաարդյունաբերական համալիրի գրեթե 25-ամյա գոյության ժամանակահատվածում իրականացված խելամիտ ֆադաֆականության ու հսակ ռազմավարության շնորհիվ կարողացավ գրանցել հաջողություններ: Թուրքիան իր բանակի մեծությամբ հանդիսանում է ՆԱՏՕ-ի երկրորդ երկիրը, և իր կարիքների որոշ մասի ապահովումը սեփական ռազմաարդյունաբերության միջոցով արդեն իսկ լուրջ հաջողություն է:

60-ական թթ. Կիտրոսի ձգնաժամի դասճառով արևմտյան երկրների կողմից զենքերի ու ռազմական սեխնիկայի ձեռք բերման արգելախնամ դրվեց Թուրքիայի նկատմամբ, ինչը դրդեց այդ երկրի բանակի բարձրագույն հրամանատարությանը որոնել այլընտրանքային ուղիներ՝ անհրաժեշտ կարիքներն ապահովելու համար զարգացնել սեղական ռազմական արտադրությունը: 1970-ական թթ. զինված ուժերի առանձին հրամանատարությունների կողմից ստեղծվեցին հիմնադրամներ, որոնք ղեկավարում էին ծրագրեր մշակելն ու խթանելն ռազմասեխնիկական միջոցների արտադրությունը: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին մի քանի ռազմաարդյունաբերական ընկերություններ՝ ASELSAN, ISBIR, ASPILSAN, HAVELSAN, որոնք

մինչև օրս լուրջ դերակատարություն ունեն թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման գործում:

Միայն 70-80-ական թթ. Թուրքիայում հիմնվեց շուրջ 30 ռազմաարդյունաբերական ընկերություն, ինչին նդաստեց նաև դեռևս անմիջապես միջամտությունն ու այդ ոլորտում որդեգրած նոր ռազմավարությունը: Ռազմաարդյունաբերության զարգացումը 70-ական թթ. վերջին և 80-ական թթ. սկզբին հայտնվեց երկրի բարձրագույն ղեկավարության ու հասկալի ԶՈՒ-ի բարձրագույն հրամանատարության ուժադրության կենտրոնում, և սկսեցին իրականացվել կազմակերպչական ու օրենսդրական մի շարք ֆայլեր այդ ոլորտի զարգացման նդասակով:

ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների հետ ռազմաարդյունաբերության ոլորտում Թուրքիայի հետ համագործակցությունը, համատեղ մի շարք նախագծերը լուրջ ազդեցություն ունեցան Թուրքիայում ռազմաարդյունաբերական ենթակառուցվածքների զարգացման ու մասնագիտական կազմի դաստիարակման վրա: Ռազմաարդյունաբերական շարքեր նախագծերը հնարավորություն սվեցին Թուրքիային որոշակիորեն ծանոթանալ ռազմական սեխնոլոգիաներին, արտադրական գործընթացին, ինչն էլ հետագայում հնարավորություն սվեց իրականացնել սեփական ռազմաարդյունաբերական ծրագրերը:

Թուրքիայի ԶՈՒ-ի սդառագիևության ադահովման ու ռազմական արդյունաբերության զարգացման դեռևս ծրագրերի մշակման և իրագործման նդասակով ստեղծվեց հասուկ մարմին: Ռազմավարական խնդիր էր դրված երկրի բանակին անհրաժեշտ սդառագիևությունն ու ռազմական սեխնոլոգիաները մշակել ու արտադրել երկրի ներսում, ինչդեռ նաև իրականացնել բանակի սդառագիևության արդիա-



Նմուշ ISBIR-ի արտադրանքից



Նմուշ ROKETSAN-ի արտադրանքից

կանացման աշխատանքները, ինչը ավելի ճիշտադեպ ձեռնարկ է և կախման մեջ չէր դնում երկիրը այլ շահագործողներից: Մինչ այդ մարմնի ստեղծումն ու օրենսդրության ընդունումը, երկրում արդեն գործում էին ռազմական արտադրության ոլորտի մի քանի ընկերություններ, որոնց գործողություններն ու ծրագրերը չէին համակարգվում ռազմական ծրագրերով ու հսկայական ռազմավարությամբ:

1980-ականների կեսերից սկսեցին իրականացվել ռազմական ծրագրեր: Ոլորտի հետ կապված օրենսդրական ու կառուցվածքային նախաձեռնությունները կոչված էին նյութական բազայի վրա մեկնել ռազմական ռազմական երկարաժամկետ նախագծեր, որոնք իրականացվում էին ՊՆ-ի կողմից: 1985 թ. ստեղծվեց հասույ մի մարմին, որն իրականացնելու էր ռազմարդյունաբերության զարգացմանն ուղղված ծրագրեր: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին ենթակառուցվածքներ ու մի քանի այլ մարմիններ, որոնք ղեկավարում էր նախագահի գլխավոր զարգացմանը: Եթե մինչև 90-ական թթ. Թուրքիան հիմնականում բանակի կարիքների համար գնում էր դաստիարակ սպորտազինություն արտերկրից, ապա 90-ականներից սկսեց իրականացնել մի քանի համասեղ ռազմարդյունաբերական նախագծեր այլ երկրների հետ, իսկ վերջին տարիներին իրականացնում է ռազմարդյունաբերական ինֆնուրոյն մեկնումներ ու արտադրություն:

Թուրքական ռազմական արդյունաբերության հիմնական ոլորտները դասակարգվում են հետևյալ կերպ.

- ինֆնաթիռաչինություն և օդային միջոցներ,
- հրթիռահրետանային համակարգեր,
- էլեկտրոնային ու ռազմական կառուցվածքային սարքավորումներ,
- զինատեսակներ, թեթև սպորտազինություն,

- ռազմական սարքեր դասի նավեր,
- զրահադաս մարտական մեքենաներ ու փոխադրամիջոցներ,
- ռազմական հանդերձանք:

Թուրքիայում գործող 8 սասնյակ ռազմական ու մասնավոր ռազմարդյունաբերական ընկերություններն իրականացնում են դասակարգական սարքեր ոլորտներում նախագծային ու արտադրական ծրագրեր, ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ընկերությունների հետ համատեղ: Թուրքական ռազմարդյունաբերական առաջատար ընկերություններն են Roketsan (հրթիռահրետանային միջոցներ), Aselsan (հրթիռային սեխնոլոգիաներ, էլեկտրոնային սարքավորումներ ու հրամանատարական հսկողության միջոցներ), Havelsan (էլեկտրոնային անվտանգության, հեռախոսային սարքավորումներ, հրամանատարական հսկման միջոցներ), FNSS (մարտական զրահադաս մեքենաներ, ինչպես նաև դրանց համար անհրաժեշտ զինատեսակներ), MKEK (հրետանային զենքեր, դայթուցիկ սարքավորումներ, թեթև սպորտազինություն և սարքեր զինատեսակներ), TAI (Թուրքական ինֆնաթիռաչինական արդյունաբերական ընկերություն) և այլն: Ռազմարդյունաբերական նախագծերը ֆինանսավորվում են հիմնականում դասակարգական բյուջեից և ԶՈՒ-ի զարգացման հիմնադրամի կողմից:

Ռազմարդյունաբերության զարգացման նպատակով համադասասխան բնագավառում գիտական և սեխնոլոգիական ֆադաբանությունն ու մեկնումներն իրականացնում է Թուրքիայի գիտական և սեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (TÜBİTAK), որը կատարում է նաև հետազոտություններ ու զարգացման նախագծեր սարքեր բնագավառներում:

Ռազմարդյունաբերական ֆադաբանությունը



Նմուշ TAI-ի արտադրանքից



Նմուշ FNSS-ի արտադրանքից

նախատեսում է սեղականի հետ միասին նաև օսար հասվածի համար բաց, դինամիկ կառույցով, արտահանման հնարավորություններով օժտված և միջազգային շուկայում մրցունակ, նորագույն տեխնոլոգիաներին հարմարեցված և տեխնոլոգիաներ արտադրելու հնարավորություններով օժտված, տեխնոլոգիական զարգացումներին համադասասխան սեփական կառույցները ադահովող, Թուրքիային բարեկամ կամ դաշնակից երկրների հետ համատեղ ռազմաարդյունաբերական կայուն համագործակցությունը հնարավոր դարձնող և սարքեր ֆադաֆական իրավիճակներից նվազագույն չափով ազդեցություն կրող ռազմական արդյունաբերության կառույց: Ռազմաարդյունաբերության ռազմավարական հիմնադրույթներն են. որդես երկրի անվտանգության բաղադրիչ՝ թուրքական ՉՈՒ կարիքների կայուն ադահովում, այդ նդասակով բարձր տեխնոլոգիաներին դասկանող ռազմական միջոցների և զինատեսակների սեղական մշակումներ ու արտադրություն, արտադրական տեխնոլոգիական ու նյութական լայն բազայի ստեղծում և ազգային ռազմաարդյունաբերության ենթակառույցների ընդլայնում, սեղական հիմքի վրա սեփական տեխնոլոգիաների երկարաժամկետ զարգացում, մասնակցություն միջազգային ռազմաարդյունաբերական նախագծերին, սեղական և օսարերկրյա մրցակցության համար բաց ռազմական արդյունաբերության ենթակառույցների զարգացում:

Ներկայումս գործողության մեջ է ՉՈՒ ԳԸ-ի հավանությանն արժանացած «ՊԱԳՎ-ի 2007-2011 թթ. ռազմավարական դլանը», որը հսակեցնում է ռազմաարդյունաբերության զարգացման ու բանակի արդիականացման համար իրականացվելիք ողջ ռազմավարական ծրագրերը և առաջնահերթությունները: Ըստ այդ ռազմավարական ծրագրի՝ երկրի ռազմատեխնիկական կարիքների ադահովման առումով

առաջնահերթությունը սրվում է սեղական հիմքի վրա մշակումներին ու արտադրական գործընթացին: ՉՈՒ-ի արդիականացմանն ու ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված ֆադաֆականությունը կիրառում է 3 մողել.

սեղական արտադրություն, որտեղ առաջնահերթությունը սրվում է թուրքական ընկերությունների կողմից նախագծերի մշակմանը և արտադրական բազայի ընդլայնմանը,

համատեղ կամ կոնսորցիումային արտադրություն, որտեղ, արդյունավետությունից ելնելով, կիրառվում են այլ երկրների կամ ընկերությունների հետ համատեղ մշակումների գործողություններ,

ուղղակի գնումներ կամ համատեղ արտադրություն, ինչը ենթադրում է դասրաստի արտադրանքի ձեռք բերում կամ համատեղ արտադրություն, որտեղ մասնակցում են թուրքական ընկերություններն ու ֆինանսական կադիսայի ներդրումները:

Վերջին տարիներին Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը գրանցել է հաջողություններ նաև ռազմական արտադրանքի արտահանման ծավալների առումով: Մինչև 2011 թ. նախատեսվում է թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի տարեկան արտահանման ընդհանուր ծավալը հասցնել 1 մլրդ. դոլարի: 2007 թ. դրությամբ այն կազմել է շուրջ 420, իսկ 2008 թ.՝ ավելի քան 570 մլն. դոլար: 2009 թ. այդ ցուցանիշը կազմել է 670 մլն. դոլար:

Թուրքիան մեծամասամբ արտահանում է ռազմական փոխադրամիջոցներ, գրահամեմեմաներ, հրթիռահրետանային համակարգեր, ռազմածովային միջոցներ ու թեթև սդառազինություն: Հիմնականում արտահանվել են Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մալայզիա, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա, արաբական մի շարք այլ երկրներ, Բոսնիա-Հերցեգովինա, Ալբանիա, Պակիստան և այլն: Կան



Նմուշներ MKEK-ի արտադրանքից

Milli imkanlarla Modern Tank Üretimi Projesi

ALTAY
İmza Töreni

ALTAY
İmza Töreni



փաստեր, և դրանց մասին հրադարակեց նաև ՌԳ դաշնայինության նախարարությունը վրաց-օսական դաշնագծից հետո, որ բավականին մեծ է եղել թուրքական ռազմական օժանդակությունը Վրաստանին: Բավականին ինտենսիվ է զարգանում նաև թուրքադրբեջանական ռազմական համագործակցությունը, իրականացվում են ծրագրեր նաև ռազմաարդյունաբերության ոլորտում:

Ըստ 2007-2011 թթ. ռազմավարական ծրագրի՝ 2010 թ. վերջին արդեն երկրի ՁՈՒ-ին անհրաժեշտ ռազմական տեխնիկայի ու սղառազինության շուրջ 50%-ը դեռ է ադախովյի թուրքական տեղական ռազմաարդյունաբերության միջոցով: 2009 թ. տեղական ռազմաարդյունաբերության միջոցով թուրքական ՁՈՒ-ի սղառազինության կարիքների ադախովյանը հասել է շուրջ 45,7 %-ի: 2003 թ. ներքին կարիքների միայն 25%-ն էր ադախովյան տեղական ռազմաարդյունաբերությունը: 2009 թ. դրությամբ տեղական ռազմաարդյունաբերության կողմից իրականացված ընդհանուր վաճառքի ծավալները զգալիորեն ավելացել են՝ կազմելով 2 մլրդ. 319 մլն. դոլար՝ 2003 թ. 1 մլրդ. 300 մլն.-ի փոխարեն:

Ռազմական արդյունաբերության զարգացման գործում մեծ կարևորություն է սրված գիտահետազոտական-փորձարարական-սրույնային (R&D) աշխատանքներին: Թուրքիայի ռազմական R&D նդասակն է զարգացնել ռազմական բարձրագույն տեխնոլոգիաներն ու իրականացնել մշակումները, ռազմական արդյունաբերության ոլորտում մշակել նորագույն տեխնոլոգիաներ ու համակարգեր: Այդ նդասակով ռազմաարդյունաբերական ընկերություններն ու գիտահետազոտական հաստատությունները, համալսարանները հաստատել են համագործակցություն, որոնց օջանակներում իրականացվում են գիտահետազոտական

աշխատանքներ: Այդ ոլորտում առաջատարներից են համարվում Սսամբուլի տեխնիկական համալսարանը (ITÜ), Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանը (ODTÜ), Բողազքջիի, Բիլեցնքի և Աթաթյուրի անվան համալսարանները: Թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների ընդհանուր ծախսերը գիտահետազոտական-փորձարարական-սրույնային մշակումների ոլորտում 2008 թ. կազմել են շուրջ 510 մլն. դոլար, ինչն աննախադեռ մեծ ցուցանիշ է նախորդ տարիների համեմատությամբ: 2004 թ. այդ գումարը կազմել է 64 մլն. դոլար:

Ընդհանուր առմամբ, Թուրքիան արդեն իսկ գրանցել է հաջողություններ սեփական ռազմաարդյունաբերության զարգացման ոլորտում, և դա նաև հնարավորություն է սալիս այլ երկրների հետ իրականացնել ինֆուորյն ռազմատեխնիկական համագործակցության ծրագրեր: Հիմնականում այդ երկրները (Ադրբեջան, Վրաստան, Ալբանիա, Բոսնիա, միջինասիական թյուրքալեզու երկրներ) զսնվում են Թուրքիայի ռազմաբաղադրական հետաքրքրությունների ու օտարերկրյան կենսրոնում և թուրքական արտադրության սղառազինության մասակարարումներն ու օժանդակությունը բարձրացնում են նախ Թուրքիայի հեղինակությունն այդ երկրների աչքում և նդասում այդ երկրի ռազմաբաղադրական ազդեցության մեծացմանը, ինչն առավել ակնառու է հասկադես Ադրբեջանի ու Վրաստանի դարադայում: Թուրքական ռազմաարդյունաբերության զարգացումը տեղավորվում է Թուրքիայի աշխարհաբաղադրական հավակնությունների օջանակում, որով այդ երկիրը փորձում է ոչ միայն ադախովել տարածաօջանում իր ռազմաբաղադրական գերակայությունը, այլ նաև կոնկրետ երկրների դարադայում լուրջ դիրքեր գրավել այդ երկրների ռազմական համակարգում:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

Արծրուն Խանջյան



Քաղաքակրթության պայքարն ընդդեմ ցեղասպանության ընդգրկում է մարդկային գործունեության բազմազան ոլորտներ. քաղաքականություն, իրավունք, պատմագրություն, գրականություն և այլն:

Քաղաքականության ասպարեզում, որպես ցեղասպանության ընդգրկում:

թյան դեմ հիշարժան շեղարկումներից մեկը կարելի է նշել Արևմտյան Հայաստանում հայերի դեմ իրականացվող ցեղասպանության առթիվ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի 1915 թվականի մայիսի 24-ի համալսելի հռչակագրի: Այդ հռչակագրով երեք պետությունները դադարեցրել էին հայերի զանգվածային կոտորածները, որպես «Թուրքիայի կող-

մից մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացվող հանցագործություններ»:¹

Նշված հռչակագրի նշանակությունն ըստ արժանավայել է գնահատել ակադեմիկոս միջազգայնագետ Շերիֆ Բասիունին: Վերջինիս կարծիքով² այդ հռչակագրից է սկիզբ առել «մարդկության դեմ հանցագործություններ» հաս-

1 - "Геноцид армян в Османской империи", Сборник документов и материалов, Под редакцией М.Г.Нерсисяна, Второе, дополненное издание, Издательство "Айастан", Ереван, 1983г., էջ 601-602:
2 - M. Cherif Bassiouni, "Crimes Against Humanity in International Criminal Law", Second Revised Edition, Kluwer Law International, Hague, Netherlands, 1999, էջ 62:



Փոլ Մանսոն

կացության լայն կիրառությունը, որով ներկայումս բնորոշվում են միջազգային ծանրագույն ոճրագործությունները:

Իրավական ասպարեզում, քննարկվող հարցի տեսանկյունից, առավել նշանակալի փաստաթուղթըն, անշուշտ, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պարժելու մասին ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիան է: Ուշագրավ է, որ ցեղասպանության դեմ այդ հիմնարար իրավական փաստաթղթի ներածությունում ամրագրված է, որ պետություններն ընդունում են, որ «...պայմանական բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պարճառել մարդկությանը...»: Այսպիսով «ցեղասպանություն» հասկացության կիրառումը ՄԱԿ-ի և նրա անդամ պետությունների կողմից

ամենևին էլ չի սահմանափակվում միայն կոնվենցիայի ընդունումից հետո ընկած ժամանակաշրջանով, ինչպես փորձում են ներկայացնել թուրքական կողմի մեկնաբանները, այլ վերաբերում է «պայմանական բոլոր ժամանակաշրջաններին»:

Ցեղասպանության ոճրագործության դեմ քաղաքակրթության պայքարում իր ծանրակշիռ դերն ունի նաև գեղարվեստական գրականությունը: Մարդկության քաղաքակիրթ հասրվածի գրականությունը լայնորեն արտացոլել է փարբեր ժամանակաշրջաններում իրականացված ցեղասպանությունները, այդ թվում և հայ ժողովրդի եղեռնը Արևմտյան Հայաստանում:

Այդ աղետը մարդկությանը ներկայացրած հայ և օտարազգի հեղինակների խիստ մեծաքանակ լիներ գործնականում անհնարին է դարձնում հողվածի շրջանակներում նրանց բոլորի անուններն ամփոփելը և սրեղծագործությունները հիշարակելը:


Սակայն մեր ժողովուրդն անշուշտ երախարագիրությամբ է հիշում բոլոր նրանց, ում շնորհիվ Մեծ եղեռնի, ինչպես նաև ցեղասպանության քաղաքականության հետագա դրսևորումների մասին ճշմարտությունը հասու է դառնում միջազգային հանրությանը:

Գուցե ոմանց արտասովոր

թվա, որ ցեղասպանության ոճրագործության դեմ պայքարում իր ավանդն ունի նաև երգիծանքի ժանրը: Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ երգիծանքը որոշակի իրադրություններում և հատկապես իր ծաղրանքի ոճում ամենևին էլ ծիծաղ չէ որ առաջացնում է, այլ ավելի շուրճվորովմունք և մերժողական վերաբերմունք: Ներկայացնենք այդօրինակ երգիծանքի որոշ նմուշներ:

Հերևյալ մեջբերումը իտալական դիվանագետ Դանիել Վարեի «Ծիծաղող դիվանագետը» գրքից է³: Վարեն Ազգերի լիգայի քարտուղարության քաղաքական բաժանմունքի աշխատակից էր և մասնակցում էր 1919 թվականին հրավիրված Փարիզի հաշտության վեհաժողովի աշխատանքներին: Վեհաժողովի շրջանակներում Հայկական հարցի վերաբերյալ անվերջանալի քննարկումների անարդյունավետությունը շարբերի համար դարձել էր այնքան ակրնհայտ, որ նման քննարկումներից մեկի ժամանակ Ազգերի լիգայի քարտուղարության քաղաքական բաժանմունքի տնօրեն Փոլ Մանսոնն տեղին համարեց կազմել սրեղծված իրավիճակը ծաղրի ենթարկող մի

3 - Daniele Vare, "Laughing Diplomat", London, John Murray, 1938:



Ազգերի լիգա

զավեշտ-բանաչև: Նիստի ընթացքում նա այդ բանաչևը փոխանցում է Դանիել Վարեին, ասելով որ եթե մեծ տերությունները չեն աջակցելու Հայաստանին, ապա միակ բանը որ նրանք կարող են անել հայերի համար՝ իր առաջարկած բանաչևն ընդունելն է:

Ահա այն.

«ՀՈՂՎԱԾ 1.

Հայերի ոչ մի կոտորած չպետք է տեսնուի ունենա առանց Լիգայի խորհրդին մեկ ամիս առաջ տեղեկացնելու:

ՀՈՂՎԱԾ 2.

Եթե կոտորածներն ընդգրկելու են նաև կանանց և երեխաներին, ապա Լիգայի խորհուրդը պետք է տեղեկացվի երկու ամիս առաջ:

ՀՈՂՎԱԾ 3.

Հայերի որևէ կոտորած, որն իրականացվում է առանց սույն շնականությունների պահպանման, պետք է համարվի անվավեր»:⁴

Հազիվ թե որևէ այլ կերպ հնարավոր լիներ ավելի պարկերավոր ներկայացնել անցյալ դարի սկզբներին ընթացող ցեղասպանության և Հայկական հարցի հանդեպ եվրոպական կառավարությունների փաստացի անբարեբեր վերաբերմունքը, քան դա հաջողվել է Փոլ Մանրոյին իր զավեշտ-բանաչևի միջոցով:

Մտորև ներկայացվող երգիծանքի ժանրին պարկեզանող հաջորդ նմուշը պարկեզանում է 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի շոտլանդական ծագմամբ քրիստոնացի հայրնի գրող Հեկտոր Հյու Մանրոյին,

որն ավելի շար հայրնի է իր գրական կեղծանունով՝ Սաքի: Մեջբերումը կարարված է նրա «Ֆիլբոյդ Սթաջ» կամ Մուկը, որն օգնեց» պարմվածքից. «Ամեն անգամ, երբ լուր է սրացվում Փոքր Ասիայում հայերի հերթական կոտորածի մասին, բոլորը ենթադրում են, որ այն իրականացվել է այս կամ այն տեղից սրացված «հրամանի համաձայն»: Ոչ մեկի մրրքով կարծես չի անցնում, որ մարդիկ կան, որոնց ըստ երևույթին դուր է գալիս ժամանակ առ ժամանակ իրենց հարևաններին սպանելը»:⁵



Հեկտոր Հյու Մանրո (Սաքի)

4 - Daniele Vare, "Laughing Diplomat", London, John Murray, 1938, էջ 175:

5 - Hector Hugh Munro (Saki), "Filboid Studge, The Story of a Mouse That Helped", in "The Book of English Humour", Moscow, Raduga Publishers, 1990, էջ 52:



Ռոբերտ Շեքլի

Հաջորդ մեջբերումը 20-րդ դարի ամերիկյան գրող Ռոբերտ Շեքլիի «Մի փոքր չգրուցե՞նք» պատմվածքից է. «Երկրի բնակիչները ցեղասպանությունն իրոք համարում են խիստ տհաճ բան և չեն սիրում այդ մասին, կամ դրա պես մի այլ բանի մասին, կարդալ առավելության թերթերում: ...Իհարկե տհաճ է առավելության սուրճն ըմպելիս կարդալ ցեղասպանության մասին: Այդպիսի լուրերը կարող են տրամադրությունն ամբողջ օրով փչացնել: Երեք-չորս ցեղասպանություն, և մարդը կարող է այնքան վրդովվել, որ ընտրություններին իր շայնը տա մեկ ուրիշ թեկնածուի»:⁶

Ցեղասպանության թեմային իրենց սրեղծագործություններում անդրադարձել են նաև բազմաթիվ գեղանկարիչներ, երգա-

հաններ, քանդակագործներ, կինեմատոգրաֆիստներ՝ օգտագործելով իրենց արվեստի արտահայտամիջոցներն ու յուրահայտությունները այդ ոճագործության արհավիրքները պատկերելու և մարդկությանը ներկայացնելու համար:

Ցեղասպանության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի ներածությունում հավաստագրված է, որ «քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է» ցեղասպանության ոճագործությունը: Սակայն իրական վիճակի վերլուծությունը բերում է այլ եզրահանգման՝ որ քաղաքակիրթ աշխարհը, հանձինս իր կառավարությունների, որպես կանոն գերադասում է դատապարտել ցեղասպանությունն ընդհանրապես՝ որպես երեվոյթ: Իսկ ցեղասպանության կոնկրետ փաստերը դատապարտելու հարցում հաճախ

վճռորոշ են դառնում քաղաքական կամ քրեական կանոնակարգողները:

Այսպես՝ առ այսօր աշխարհի 193 պետություններից միայն քսանն են դատապարտել հայ ժողովրդի ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում:

Ըստ իս, հենց այդ քսան պետություններով էլ այժմ կարելի է ճշգրտորեն որոշել իրապես քաղաքակիրթ աշխարհի ճշմարիտ սահմանները:

Անշուշտ հուսադրող է, որ քաղաքակիրթ աշխարհի սահմաններն այնուամենայնիվ տարեց-տարի ընդլայնվում են. ի վերջո, նման ընդլայնման հնարավորինս շուրափույթ ծավալումը բխում է ողջ մարդկության համընդհանուր շահերից:



6 - Robert Shekley, "Shall We Have a Little Talk", Galaxy Magazine, October, 1965, (Volume 24, No.1):

Մի բացառիկ լուսանկարի հեճերով

Կ. Բասենցի

1920 թ. Լոնդոնում հրատարակվել է «PEOPLES OF ALL NATIONS» («Բոլոր ազգերի մարդիկ») անունով բազմահատոր մի աշխատություն, որում, ավելի քան 5000 լուսանկարներով և մոտ 150 քարտեզներով, ներկայացվել է տարբեր ազգերի և ժողովուրդների համառոտ պատմությունը և 20-րդ դարասկզբի իրավիճակը: Սույն աշխատության Ջ. Ա. Համմերտոնի խմբագրած առաջին հատորում Հայաստանը և հայությունը ներկայացվել են երկու առանձին հոդվածներով՝ առաջինը Նոել Բուքստոն անունով հեղինակի տեղեկությունների և հավաքագրած լուսանկարների հիման վրա, և երկրորդը՝ Ֆ. Սի. Կոնիքեր անունով հեղինակի:

Առաջին հոդվածում («Armenia-Tattered Remnants of an Ancient Race»- «Հայաստան- Հին ցեղի բզկտված մասունքները», նշված աշխատություն, էջ 225-246) տեղադրված մի քանի լուսանկարների շարքին, վարում երևացող լուսանկարի մասին հանդիպում ենք հետևյալ մակագրության. «Հայերի բնատուր կարողականությամբ ներկայացուցչական խումբ. Ռուսական հեղափոխության պարճառած արհավիրքի տարիներին Հայաստանում, Վանա լճի արևմտյան ափին սրեղծվեց մարդկանց՝ բնատուր առաջնորդների այս խումբը»:

Լուսանկարը համեմատելով այլ լուսանկարների հետ և դատելով մակագրութիւնից, կարծում ենք, որ կենտրոնում երևացող ինքն՝ Արամ Մանուկյանն է:



Հարցազրույց Հասան Սելիմ Օզերթեմի հետ

2010 թականի օգոստոսի 4-ին,

Թեհրանում, «Թեհրան» լրատվական համալսարանի Կովկասագիտության հիմնարկի
 և Թեհրանի «Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնի» («ՀՈՒՄԿ» հաստատություն) համա-
 գործակցությամբ տեղի ունեցավ միջուկային միջազգային համագումար «Հայաստան-2010 և հեռանկար-
 ներ» թեմայով: Համագումարին հրավիրել էր նաև Թուրքիայի «Միջազգային ռազմավարական
 ուսումնասիրությունների կազմակերպության» (www.usak.org.tr) գիտահետազոտող և դոկտորականի
 թեկնածու Պրոֆ. Հասան Սելիմ Օզերթեմը, որը զեկոյց ներկայացրեց Հայաստան-Թուրքիա
 յարաբերությունների վերաբերյալ «Թուրք-հայկական յարաբերությունները փակուղու մեջ» խորագրով*:
 Համագումարին մասնակցող զեկուցաբերները հիր եղան Թեհրանի Հայ մշակութային «Արարատ»
 կազմակերպության մարզահամալիրում:

Ներքոյ հարցազրույցը դոկտ. Օզերթեմի հետ կատարել է նույն օրը մարզահամալիրում:

Հ.- Յարգելի դոկտոր, կը խնդրեմ ամփոփ կերպով ծանոթացրե՞մ Ձեզ մեր ընթերցողներին:

Պ.- Ես Հասան Սելիմ Օզերթեմն եմ (Hasan Selim Ozertem), գիտաբան եմ և հետազոտություններ եմ կատարում Թուրքիայի Միջազգային ռազմավարական ուսումնասիրությունների կազմակերպությունում: Իմ ուսումնասիրությունների առանցքը հիմնականում Ռուսաստանն է, Հարավային Կովկասը, էներգետիկ ֆազականությունները, Թուրքիա-Հայաստան յարաբերությունների և Թուրքիայի արտաքին ֆազականության կադրավորումները:

Հ.- Ըստ կարճ եր Ձեր ճամբորդությունը Իրան, այս կարճ ժամանակում ինչպե՞ս տպավորեցի՞ք Իրանից և ի՞նչ է Ձեր գնահատումը այս ճամբորդությունից:

Պ.- Նախքան Իրան ճամբորդելը, մի այլ դասկերպում ունեի Իրանից. մտածում էի, թե այստեղ լավի տեսքով կազմաթիւ մզկիթներ, չլիսի տեսնեմ շատ մարդ փողոցներում, բայց յանկարծակիի եկայ, երբ տեսայ խցանումը և այսֆան մեծ թուղ բազմութիւն փողոցներում: Հաճելի ֆազաք է Թեհրանը, ինչ-որ մի կերպ նման է Սամբուլիին: Թեհրանը ունի իր իրայատկու-



